

Մինսկի Խուճրդ Տեղեկություն Զուգի Արցախի Մեջ Սուրիահայերու Բնակեցման Մասին

ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի ռուսաստանցի համանախագահ Իկոր Պոպով հանգստացուցած է ատրպեյձանական կողմին՝ ըսելով թե տեղեկություն չունին Լեռնային Ղարաբաղի մեջ Միջազգային հայ ընտանիքներու զանգուածային բնակեցման մասին: Պոպով պատասխանելով ատրպեյձանական APA լրատուական գործակալության հարցին ըսած է որ, կարելի է ենթադրել, որ եթե նույնիսկ եղած են բնակեցման դեպքեր, ապա քիչ հաւանական է, որ անոնք ունենան զանգուածային բնույթ:



ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի
համանախագահ Իկոր Պոպով

«Սուրիոյ մէջ շարունակուող հակամարտութեան պատճառով շուրջ երկու միլիոն մարդ գաղթական դարձած են, անոնց մեծ մասին ապաստան տուած են շրջակայ երկիրները: Այդ ամէնը արտացոլուած է, մասնաւորապէս, վերջերս ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի կողմէ ընդունուած՝ Սուրիոյ մարդասիրական իրավիճակի վերաբերեալ բանաձեւին մէջ: Ինչ կը վերաբերի Լեռնային Ղարաբաղին, ապա մենք տեղեկութիւն չունինք այնտեղ սուրիական ընտանիքներու զանգուածային բնակեցման մասին», - ըսած է Մինսկի խումբի ռուսաստանցի համանախագահ՝ շարունակելով՝ - «Կարելի է ենթադրել, որ եթե նույնիսկ եղած են բնակեցման դեպքեր, ապա քիչ հաւանական է, որ անոնք կրեն

զանգուածային բնույթ: Այդ մասին մեզի աւելի վաղ տեղեկացուցած էր նաեւ ՄԱԿ-ի Փախստականներու հարցերով գերագոյն յանձնակատարը»:

Այս կապակցութեամբ, Ատրպեյձանի արտաքին գործոց նախարար էլմար Մամետեարով անցեալ տարուայ Օգոստոսին նամակ լղած էր ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղար Պան Կի-Մունին՝ պնդելով, թէ Հայաստան, օգտուելով գինադադարը «ատրպեյձանական գրաւուած» տարածքներու վրայ սուրիահայերու վերաբնակեցման

Շարք էջ 5

Ըստ Նալբանդեանի՝ Ղարաբաղի Հարցով Հայաստանի Սօսեցումները Կը Վայելեն Միջազգային Աջակցութիւնը»

Հայաստանի Հանրապետութեան դիւանագէտներու օրուայ առթիւ իր ունեցած ելոյթի ընթացքին արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան յայտարարած է որ, Ղարաբաղեան հարցի լուծման ուղղութեամբ Հայաստանը ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի համանախագահներուն հետ միատեղ ջանքեր կը գործադրէ՝ հիմնահարցի բացառապէս խաղաղ եւ միջազգային իրաւունքի սկզբունքներուն հիման վրայ հանգուցալուծման համեմատելի նպատակով:



ՀՀ արտաքին գործոց նախարար
Էդուարդ Նալբանդեան

«Մինսկի խումբի համանախագահող երկրներին ղեկավարների հինգ համատեղ յայտարարութիւնները Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման վերաբերեալ վկայում են, որ Հայաստանի մօտեցումները ոչ միայն ըմբռնելի են, այլ նաեւ վայելում են միջազգային հանրութեան աջակցութիւնը», - հաւաստիացուցած է նախարարը:

Նախաձեռնութեամբ առաջադրուած ցեղասպանութեան կանխարգելման վերաբերեալ բանաձեւի ընդունումը»:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցին՝ Նալբանդեան ըսած է. - «Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի նախաշեմին մեր դիւանագիտութիւնը հետամուտ է դրա՝ որպէս մարդկութեան դէմ իրակաւնացրած ծանրագոյն յանցագործութեան միջազգային ճանաչմանը եւ դատապարտմանը: Հայաստանը միջազգային բեմահարթակում հետեւողականօրէն բարձրաձայնում է մարդկութեան դէմ նմանատիպ ոճիւրների կանխարգելման անհրաժեշտութիւնը, հանդէս գալիս համապատասխան նախաձեռնութիւններով, ինչպէս դա եղաւ անցեալ տարի Ժընեւում ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների խորհրդի նստաշրջանում կոնսենսուսով մեր

Մաքսային Միութեան Հայաստանի անդամակցութեան առնչութեամբ Էդուարդ Նալբանդեան ասած է. - «2013 թուականը նշանաւորուեց Մաքսային միութեանը Հայաստանի Հանրապետութեան միանալու որոշմամբ, որը բխում է Հայաստանի տնտեսական եւ ռազմավարական շահերից»:

Միաժամանակ ան յայտնած է, որ Հայաստան եւ Եւրոպական Միութիւնը երկուստեք վերահաստատեցին փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող բոլոր կարելի ոլորտներուն մէջ համապարփակ համագործակցութիւնը զարգացնելու եւ ամրապնդելու յանձնառութիւնը:

«Հայաստանը հետեւողական ջանքեր է գործադրում սերտացնելու իր ռազմավարական դաշնակցութիւնը»:

Շարք էջ 5

Քրք Քրքորեան Կը Մնայ Աշխարհի Ամենահարուստ Հայը

Ամերիկեան «Ֆորպս» ամսագիրը հրատարակեց աշխարհի միլիարդատերերու տարեկան ցուցակը, որուն վրայ տեղ գրաւած են վեց հայեր:



Քրք Քրքորեան՝ աշխարհի
ամենահարուստ հայը

«Ֆորպս»-ի ցուցակին վրայ Ամերիկահայ Քրք Քրքորեան իր 4,5 միլիարդ տոլարով գրաւած է 328-րդ տեղը, մնալով աշխարհի ամենահարուստ հայը: Քրքորեանի կարողութիւնը անցեալ տարի աւելցած է 1,2 միլիարդով:

Քի վրայ են՝ իւրաքանչիւրը 1,1 միլիարդ տոլար կարողութեամբ: Սարկիսովներու կարողութիւնը վերջին տարուայ ընթացքին նուազած է 350-ական միլիոն տոլարով:

Ցուցակին վրայ յաջորդ հայը 345-րդ տեղը գրաւող «Տաշիր» խումբի սեփականատէր Սամուէլ Կարապետեանն է՝ 4,3 միլիարդ տոլարով, ինչ որ կէս միլիարդով աւելի է անցեալ տարուայ ցուցանիշին:

Սերկէյ Սարկիսով վերջերս նշանակուած էր Լոս Անձեյըսի մէջ Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս:

«Ռոսգոսստրախ» ընկերութեան համասեփականատէր Դանիէլ Խաչատուրով 2,6 միլիարդով կը գրաւէ 663-րդ տեղը: Ան կարողութիւնը աճած է 200 միլիարդ տոլարով:

Վեց հայ միլիարդատէրերուն չորսը իրենց գործունէութիւնը կը ծաւալեն Ռուսաստանի մէջ: Միլիոնատէրերու աղիւսակը, 4 տարուայ ընդմիջումէ ետք կրկին կը գլխաւորէ «Microsoft» ընկերութեան հիմնադիր Պիլ Կէյթսը:

Միւսը Արժանթինահայ էտուարտո Էռնեստեանն է՝ 1,9 միլիարդ տոլարով: Անոր կարողութիւնը վերջին 1 տարուայ ընթացքին աւելցած է 100 միլիոն տոլարով:

«ՌեՍՈ-Գարանտիա» ապահովագրական խումբի սեփականատէր եղբայրներ՝ Սերկէյ եւ Նիկոլայ Սարկիսովները 1465-րդ դիր-

Ճոն Քերրի Այս Տարի Կ'այցելէ Հայաստան

«Արմենիա» լրատուական գործակալութեան տրուած հարցազրոյցի մը ընթացքին, Հայաստանի մօտ Ամերիկայի դեսպան ձոն Չեֆերն ըսած է որ, Միացեալ Նահանգներու պետական քարտուղար ձոն Քերրի շատ հաւանաբար այս տարեվերջերուն կ'այցելէ Երեւան:

Երկու անգամ այցելած է Հայաստան, մինչ այդ 18 տարի որեւէ պետական քարտուղար Հայաստան չէր եկած, յիշեցուցած է դեսպանը ու աւելցուցած - «Անցեալ տարեվերջին, երբ արտաքին գործոց նախարար Նալբանդեան հանդիպում ունեցաւ պետական քարտուղար Քերրիի հետ, ան ցանկութիւն ունեցաւ Հայաստան այցելելու, եւ յոյսով ենք, որ պետական քարտուղարը Հայաստան կ'այցելէ այս տարեվերջերուն»:

«Շատերը կը հարցնեն՝ ինչպիսին է Միացեալ Նահանգներու արձագանքն ի պատասխան այն հարցին, որ Հայաստան կը միանայ Մաքսային Միութեան: Ուաշինկթոն շատ յստակ յայտնած է՝ ԱՄՆ-ը այժմ առաւել քան երբեք կը փափաքի իր յարաբերութիւնները աւելի խորացնել եւ աւելի լաւ գործընկեր դառնալ», - ըսած է Ամերիկայի դեսպանը:

Անդրադառնալով հայ - ամերիկեան յարաբերութիւններուն՝ ձոն Չեֆերն ըսած է, որ նախկին պետական քարտուղար Քլինթոն

Քերրիի յառաջիկայ այս այցի վերաբերեալ դեսպանը այլ մանրամասնութիւններ չէ հաղորդած, միայն նշելով, որ այդ այցը տարածաշրջանային է:

Իր կարծ պատասխանին մէջ Չեֆերնն առանձնացուցած է հայ - թրքական յարաբերութիւնները, ընդգծելով որ պետական քարտուղարը կ'ուզէ լուծել այդ հարցը:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ի՞նչ արդիւնքով կը փակուի սիրախաղի հերթական սեզոնը

ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ

Մարտի 1-ի ՀԱԿ-ի հանրահասարակ բուռն քննադատութիւնները տեղիք տուեց, անշուշտ, Գազիկ Մառութեանի, այսպէս ասած, ի վա- նիշվիլիութեան մասին ՀԱԿ առաջ- նորդի ելուցի պատճառով: Աւե- լին, հանրահասարակ իրական նպա- տակն ըստ ամենայնի Գազիկ Մա- ռութեանին ընդդիմութեան առաջ- նորդ օժեւն էր: Թէեւ Լեւոն Տէր- Պետրոսեանի յայտարարութիւննե- ըրը այնքան էլ խոցելի չեն այն առումով, որ դրանք բոլորովին նոր բան չեն, նա արդէն մօտ երկու տարի է՝ գրադուած է ԲՀԿ-ին ու նրա առաջնորդին քաղաքագիտա- կան վերլուծութեան լույսի տալ ու եւերանանք կամ սիլիբիլիներ անելով եւ, այսպէս ասած, ընդդի- մադիր կնքելով: Լեւոն Տէր-Պետ- րոսեանի այդ յայտարարութիւն- ներից յետոյ տեղի չի ունեցել ոչ մի բան, որեւէ իրողութիւն կամ իրադարձութիւն, որը կարող էր հասարակութեանը հիմք տալ մտածելու, թէ ՀԱԿ առաջնորդը կարող էր այս ընթացքում մտքա- փոխուել Գազիկ Մառութեանի հարցում:

ՀԱԿ-ԲՀԿ սիրովկայր գարնան գարթօնքի հետ ընդամէնը բռնկուել է, նոր երանգ ստացել: Տէր-Պետ- րոսեանի ու եւերանանքը իրենց շատ սպասեցնել չտուեցին, պատասխան հնչեց նաեւ միւս կողմից: ԲՀԿ-ից նախ Նաիրա Զոհրաբեանը, հաւա- սարակչիւ եւ խոհեմ որակեց առա- ջին նախագահի բանաձեւը ու նկա- տեց, որ պէտք է շատերի համար այն ուսանելի լինի: Խօսքն Լեւոն Տէր-Պետրոսեանի ելուցի այն հա- տուածի մասին է, ուր նա ասում է. «Ոչ ոք մեզ արկածախնդրութեան դրդելու եւ մեզանից բան պահան- ջելու իրողութեանը չունի: Այլ բան պահանջողները թող գտնէ Շանթի չափ ազնուութիւն եւ քաջութիւն ունենան եւ անձամբ իրականացնեն իրենց պահանջները: Մենք ոչ ոքի խանգարելու մտադրութիւն չու- նենք: Եթէ մեզ հետ համաձայն չեն եւ ուզում են գնալ այլ ճանապար- հով, թող գնան: Բայց եթէ դա վերածուի երկիրը վտանգի են- թարկող արկածախնդրութեան, մենք կը տանք դրա գնահատակա-

նը: Իշխանափոխութիւնը լուրջ գործընթաց է, որը ոչ թէ խելահեղ պոռթկում, այլ սառը հաշուարկ, իմաստութիւն եւ կարգապահու- թիւն է պահանջում» ասել է Տէր- Պետրոսեանը նկատի ՀԱԿ-ԲՀԿ համագործակցութեան ուղղու- թեամբ քար գցողներին ուղղուած: Վարդան Օսկանեանը եւս շախ է տուել Տէր-Պետրոսեանին Մա- ռութեանին արուած ուեւերանանք- րի մասով ու յայտարարել, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի Մարտի մէկի ելուցի շեշտադրումները ինչ- որ տեղ մանրամասնուած շարու- նակութիւնն էին ԲՀԿ համագումա- րում Գազիկ Մառութեանի հնչեց- րած գնահատականների: ԲՀԿ-ն այսպիսով «շաբաշ» է տալիս ՀԱԿ առաջնորդին լաւ կատարման հա- մար եւ հաստատում վերջինիս մօտեցումը ՀԱԿ-ԲՀԿ համագոր- ծակցութեան մասին:

Մինչդեռ փաստ է, որ ՀԱԿ առաջնորդի քաղաքագիտական յայտնի վերլուծութիւնից յետոյ քաղաքական ներկայակցում այդ վերլուծութեան հաւանական ար- դիւնքների մասով բացառապէս որեւէ նկատելի առաջընթաց չի եղել, բացի այն բանից, որ ՀԱԿ-ը բոլորովին բարոյացրկուել է ԲՀԿ- ի դաշնակցութեան արդիւնքում, իսկ ԲՀԿ-ն այդպէս էլ ուեւալ քայլեր չի արել իշխանութեան դէմ, առա- լել եւս յանուն իշխանափոխու- թեան: Չի բացառուում, որ ՀԱԿ-ն ու ԲՀԿ-ն հիմա էլ իրականում ընդամէնը «բլեֆ» են անում Սերժ Սարգսեանի համար, որպէսզի նա այդ տանդէմի միաւորման գաղա- փարից վախեցած՝ փորձի հրաւի- րել նրանց առանձին-առանձին եւ լեզու գտնել: Այսինքն՝ դաշինքը երկու կողմին պէտք է Սերժ Սարգսեանի վրայ հնարաւորինս թանկ գնով վաճառուելու համար, քանի որ երկու ուժն էլ միգրացի հասկանում են, որ խորքային իմաս- տով իրենց դաշինքը անգամ իրա- կան լինելու դէպքում հեռանկար չունի, աւելին չունի նաեւ իրական լինելու բաւարար հիմքեր: Պար- գապէս երկու ուժերի շահերը հա- մընկել են կարճաժամկէտ առու- մով, եւ նրանք փորձում են օգտուել դրանից:

«ՀԱՅԵԼԻ»

Սրբափուելու ժամանակը

Ամէն ինչ հասկանալի է՝ եւ հասարակութեան ուսումնասիրու- թիւնը, որ պատմական արմատներ ունի, եւ Ղարաբաղի հետ կապուած տագնապներն ու այսքան տարուայ կորուստներից յետոյ այն չկորց- նելու վախը, եւ սահմանակից հա- րեւանների պոտենցիալ ազդեցի- լի վտանգը:

Բայց պապից աւելի կաթոլիկ լինելու, իսկ տուեալ դէպքում, կարելի է ասել՝ ուսուցից աւելի ուսու լինելու ջանքերը ոչ մի կերպ չեն հասկացուում: Այդ ինչպէ՞ս կարող է հսկայական ուսուսուցող բնակչութիւն ունեցող, աւտորի- տար Ղազախստանն աւելի արժա- նապատիւ կեցուածք դրսեւորել եւ կոչ անել Պոտինին՝ մնալու մի- ջազգային իրաւունքի շրջանակ- ներում: Անգամ Բատկայի ղեկա- վարած Բելառուսն աւելի հան- դարտ ու հաւասարակչիւ է պա- հում իրեն եւ բարձրաստիճան պաշտօնեայի շուրթերով ակնար-

կում, որ իրենք չեն բացառում եւրախնտեգրումը, իսկ Հայաստա- նը յամառօրէն շարունակում է Մաքսային Միութիւն կառուցելու անշնորհակալ գործը: Երէկ եւս հայ բարձրաստիճան պաշտօնեա- ներն արտայայտուել են այդ թե- մայով եւ հպարտօրէն գեկուցել, որ արագ եւ վստահ քայլերով գնում են դէպի ՄՄ:

Մի՞թէ ուկրաինական դէպ- քերը ոչինչ չեն փոխել նրանց մտածողութեան մէջ եւ դեռեւս չեն ապացուցել, որ՝

- 1. ՌԴ պետութեան հետ վտանգաւոր է ճանապարհ գնալը՝ նա ամէն բանով կարող է մոռանալ միջազգային իրաւունքի համընդ- հանուր կանոններն ու կնքուած պայմանագրերը եւ վարուել այն- պէս, ինչպէս իրեն յարմար է:
- 2. ՌԴ-ն բազում խնդիրներ ունի, եւ նրա հետ չի կարելի ապագայ կառուցել:
- 3. Դեմոկրատ Արեւմուտքն

Ո՞րն է լինելու Սերժ Սարգսեանին փոխելու գիշերը

ՅԱԿՈՐԱՎԱԼԵԱՆ

Մարտի 3-ը հայաստանեան օրացոյցում չունի սեւ կամ կարմիր գոյն, այն աւելի նշանակալից չէ, քան որեւէ մեռելոց, բայց այդ օրը խորհրդանշական է Հայաստանի անկախ հանրապետութեան երկու տասնամեակի համար: Մարտի 3-ը կարելի է համարել այդ անկախու- թեան քաղաքական կեանքի բնոյ- թի օր կամ հռչակել միջին վիճա- կագրական հայաստանի քաղաքա- կան գործչի մասնագիտական տօն:

2000 թուականի Մարտի 3-ին Հայաստանի հանրապետական կու- սակցութեան եւ ՀԺԿ-ի համատեղ յայտարարութիւնը եղաւ Հոկտեմ- բերի 27-ի զարգացումների կա- պակցութեամբ: Նրանք ինքզինքը դիտորդ հռչակած Ռոբերտ Քո- չարեանից պահանջում էին պաշ- տօնանկ անել Հոկտեմբերի 27-ից յետոյ նախագահի աշխատակազմի ղեկավար նշանակուած նախկին ԱԱԾ նախարար Սերժ Սարգսեա- նին ու Հանրային հեռուստարկու- րութեան ղեկավար Տիգրան Նադ- դալեանին: Պահանջը ներկայաց- նում էին ՀՀԿ-ից Արամ Զաւէնի Սարգսեանն ու Անդրանիկ Մարգարեանը, ՀԺԿ-ից Ստեփան Դեմիրճեանը, ներկայ էր նաեւ Գազիկ Զհանգիրեանը, որը 27-ի գործն էր քննել: Պահանջը հիմ- նաւորում էին նրանով, որ այդ պաշտօնանկութիւնները բխում են 27-ի բացայայտման շահից:

2000 թուականի Մարտի 3-ից երկու ամիս անց՝ Մայիսին, Սերժ Սարգսեանի հրաժարականը պա- հանջող Անդրանիկ Մարգարեանն իր կուսակից Արամ Զաւէնի Սարգսեանի փոխարէն նշանակ- ուեց վարչապետ եւ սկսեց աշխա- տել կառավարութիւնում պաշտ- պանութեան նախարար նշանակ- ուած Սերժ Սարգսեանի հետ: Արամ Զաւէնի Սարգսեանը հեռացուեց վարչապետութիւնից, իսկ յետոյ նաեւ իր մի քանի համախոհների հետ լքեց ՀՀԿ-ն ու ստեղծեց Հան- րապետութիւն կուսակցութիւնը: Քոչարեանի հետ սկսեց աշխատել նաեւ Գազիկ Զհանգիրեանը մին- չեւ 2008 թուականի Փետրուար, մօտ ութ տարի:

Մարտի 3-ն ու դրա դերակա- տարների հետագայ ընթացքը կա- րող են հանդիսանալ Հայաստանի անկախ պետականութեան ամբողջ քաղաքական կեանքի մանրակեր- տը, ինչն էլ պարզ է դարձնում, թէ ինչու է պետականութիւնը ոչ թէ օգնել հայ ժողովրդին լուծել իր խնդիրները, այլ բազմապատկել այդ խնդիրներն ու աշխատել հայ ժողովրդի, հայաստանցիների դէմ պետականութեան ֆասադի ներքոյ ծնունդ տալով պետական ծանր յանցագործութիւնների:

Մարտի 3-ը հայաստանեան քաղաքականութեան անսկզբուն- քայնութեան, անբարոյութեան, պա-

տահապաշտութեան, երեսպաշտու- թեան, երկդիմիութեան, իտէալնե- րի ու երազների բացակայութեան եւ մի շարք մարդկային ու ինստի- տուցիոնալ արատների մարմնա- ցումն է, ինչի պատճառով էլ այն միանգամայն յարմար է հայաս- տանցի քաղաքական գործչի մաս- նագիտական տօն հռչակելու հա- մար:

Օրերս, ԵԿՄ համագումա- րում Սերժ Սարգսեանն ակնյայտօ- րէն աջակցութիւն էր հայցում երկրապահներից, որոնք էլ գենե- րալ Մանուէլի շուրթերով խոստա- նում էին «վերջին բոլշեւիկին» ծառայել եւս 30 տարի:

Թէ ինչ կար այդ խոստումը տուող երկրապահների մտքին ու հոգում, դժուար է ասել: Բայց, արժ մ յիշել, թէ ինչպէս ԵԿՄ-ն մէկ օրում փոխեց իր ճամբարը 1998 թուականին, յետոյ նոյնն արեց Հոկտեմբերի 27-ից յետոյ 2000 թուականին՝ կանգնելով Ռո- բերտ Քոչարեանի կողքին, յետոյ 2008 թուականին երկար ժամա- նակ տատանուելով Լեւոն Տէր- Պետրոսեանի ու Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի միջեւ, ԵԿՄ-ն ընտրեց Սերժ Սարգսեանին:

Վերջին բոլշեւիկը փոխան- ցիկ կոչում է, հետեւաբար դժուար է միայն ասել, թէ ո՞ր գիշերուայ մէջ է ԵԿՄ-ն Սերժ Սարգսեանին փոխելու:

Պատահական չէ, որ ԵԿՄ հիմնական դերակատարների մեծ մասը այն կուսակցութեան ան- դամներ են, որը Մարտի 3-ի գլխա- ւոր գործող անձն էր:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԾԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

այնքան անկարող չէ, որքան թուում է, եւ նրա կիրառած սանկցիաներն աւելի վտանգաւոր են, իսկ Ռու- սաստանին սանձելու համար նրան մի քանի օր է հարկաւոր: Եւ վերջապէս
4. Ռուսաստանի հետ ճակա- տագրով կապուելը չի նպաստում մեր պետութեան հեղինակութեան աճին՝ ճիշդ հակառակը:
«ՀՐԱՊԱՐԱԿ»

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տէր-Պետրոսեանը Անհրաժեշտ է Համարում
Մշակել Խաղաղ Իշխանափոխութեան
Ճանապարհային Քարտեզ



Մարտ 1-ի սպանդի տարելիցի առթիւ կայացած հանրահաւաքը՝ Ազատութեան հրապարակի վրայ

Պետական ապարատի որոշ շերտեր, ինչպէս նաեւ խոշոր գործարարների առանձին ներկայացուցիչներ աստիճանաբար յակում են արմատական փոփոխութիւնների իրականացման մտքին, Մարտ 1-ին Ազատութեան հրապարակում յայտարարեց Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) առաջնորդ, առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ հանրահաւաքի հարթակից հնչեցնելով «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան (ԲՀԿ) առաջնորդ Գագիկ Ծառուկեանի անունը:

Տէր-Պետրոսեան համոզմամբ՝ այս շերտերի այս կամ այն չափի մասնակցութիւնը համաժողովրդական պայքարին կարող է վճռական դեր խաղալ իշխանափոխութեան գործընթացում:

ՀԱԿ առաջնորդի խօսքով՝ խորհրդարանի ոչ իշխանական չորս խմբակցութիւնները, կամ ինչպէս ընդդիմադիր առաջնորդը ձեւակերպեց, հրաշալի քառակը պէտք է մշակի խաղաղ իշխանափոխութեան ճանապարհային քարտեզը, եւ այդ ուղղութեամբ առաջին քայլերը, ըստ կոնգրէսի առաջնորդի, կարծես թէ արդէն արւում են: Առաջին նախագահը լիչեցրեց, որ կոնգրէսը ձգտում է ամբողջական իշխանափոխութեան՝ արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնների միջոցով, միաժամանակ գիտակցելով, որ այդ նպատակին միացնակ հասնել չի կարող, քանի որ դրա համար անհրաժեշտ է միւս քաղաքական ուժերի աջակցութիւնը:

«Վերջիններս, սակայն, հակուած են փոփոխութեան, հանգրուանա-

լին լուծման, այսինքն՝ նախ պարտադրել կառավարութեան հրաժարականը, եւ դրանից յետոյ միայն մտածել նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնների մասին: Հասարակութեան եւ քաղաքական ուժերի ճնշման տակ տեղի ունեցող ցանկացած փոփոխութիւն դրական դիտելով, կոնգրէսը այս մտտեցումն էլ ընդունելի է համարում, եւ ամենեւին չյաւակնելով առաջատարի դերի, պատրաստ է, յանուն համերաշխութեան, իր ողջ կարողութեամբ համագործակցել միւս ուժերի հետ՝ կառավարութեան հրաժարականին հասնելու հարցում: Միաժամանակ հարկ եմ համարում յայտարարել, որ կոնգրէսը ոչ մի պարագայում մտադիր չէ մաս կազմել Սերժ Սարգսեանի ձեւաւորած որեւէ կառավարութեան, անկախ այն բանից, թէ ինչպիսի պաշտօններ մեզ կ'առաջարկուեն»,- ասաց նա:

Իր ելույթում առաջին նախագահը ընդգծեց, թէ Մաքսային միութեանը Հայաստանի անդամակցումն այլեւս անշրջելի է, իսկ եւրախտեգրումը՝ տեսանելի ապագայում անհնարին:

Ի դէպ, խորհրդարանի միւս ոչ իշխանական ուժերից հանրահաւաքում որեւէ մէկը ելույթ չունեցաւ, սակայն ժողովրդի շարքերում կանգնած էին ԲՀԿ խմբակցութեան մի քանի պատգամաւորներ, այդ թւում՝ Նաիրա Զորաբեանը, Տիգրան Ուրիխանեանը, «Ժառանգութեան» առաջնորդ Բաֆֆի Յովհաննիսեանը, ով հանրահաւաքի աւարտին մտտեցաւ Տէր-Պետրոսեանին՝ ասելով, թէ կողմ է քննարկել առաջարկուած օրակարգը:

Ազատամարտիկները Պայքարի Եւ Համախմբման
Կոչեր Զնչեցրեցին

Մարտ 1-ին մեծ թուով ազատամարտիկներ հաւաքուել էին Մարտիրոս Սարեանի արձանի մօտ, որտեղ ելույթներ ունեցան նրանց առաջնորդները, հնչեցրեցին համախմբման եւ արդարութեան համար պայքարի կոչեր եւ ժամը 15-ին միացան Ազատութեան հրապարակի հանրահաւաքին:

Ազատամարտիկները նշեցին, որ իրենց հաւաքն իր մասշտաբով աննախադէպ է՝ չնայած այն բանին, որ բազմաթիւ ազատամարտիկներ մարզերում լինելու պատճառով չեն կարողացել միանալ:

«Այն, ինչ կ'իստ է մնացել մեր պայքարում, մենք պարտաւոր ենք այս գարնանը լրացնելը»,- ազա-

տամարտիկների հարթակից ելույթ ունեցաւ «Ժառանգութեան» առաջնորդ Բաֆֆի Յովհաննիսեանը, ով նշեց, որ գնալու է Ազատութեան հրապարակ:

«Մենք պէտք է հաւաքուենք կուռղ տղերքով եւ մեր որոշումը կայացնենք, թէ ուր ենք գնում, որովհետեւ այլեւս այսպէս ապրելու իրաւունք չունենք»,- ասաց ազատամարտիկ Սուրիկ Սարգսեանը:

«Սրանից վեց տարի առաջ տակաւն կրակեց հայ ժողովրդի վրայ, տար մարդու կեանք խլեցին: Եւ արդէն վեց տարի է՝ օրէցօր Հայաստանը զահավիժում է դէպի անդունդ: Այսօրուանից սկսած մենք պէտք է որոշենք, թէ ինչ

Քաղտեխնոլոգ.- «Անհասկանալի ԵՆ ԲՀԿ
Առաջնորդին Քաղաքական Խաղի Մէջ
Ներքաշելու Փորձերը

Եթէ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ելույթում խօսք գնար Ռուսաստանից, Եւրոպայից կամ ԱՄՆ-ից հայ օլիգարխներին՝ խաղի մէջ ներգրաւուելու մասին, դա աւելի հասկանալի կը լինէր, քան այն, որ խաղի մէջ փորձում են ներքաշել «Բարգաւաճ Հայաստանի» առաջնորդ Գագիկ Ծառուկեանին: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտարարել է քաղտեխնոլոգ Կարէն Քոչարեանը:

Ամէն անգամ, ընդգծել է նա, երբ հարեւան երկրում ինչ-որ բան է տեղի ունենում, Հայաստանում փորձում են օգտագործել դա: «Սակայն պէտք է մոռանալ, որ Բիձինա Իվանիչիլիին վրաստանում կողակ անգամ չունեն»,- նշել է Կարէն Քոչարեանը:

Նրա խօսքով՝ մի կողմից կոչ է արւում, որպէսզի օլիգարխները մասնակցեն խաղին, միւս կողմից, առաջին նախագահն իրականում տեսնում է, ինչ կատարուեց վրաստանում եւ Ուկրաինայում, ընդ որում ոչ միայն հիմա, այլ նաեւ վիկտոր Եմանուիլիչի կառավարման ժամանակ: «Քանի որ վերջինս նոյնպէս օլիգարխ էր, հան-

գիստ վերցրեց իշխանութիւնը, իսկ այժ նրան հեռացրել են եւ հեռացրել են միւս օլիգարխները: Այս տեսակէտից հնարաւոր է, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը փորձում է պրագմատիկ քայլերի դիմել, դա տեխնոլոգիա է, որը փորձում են կիրառել նաեւ Հայաստանում, կը ստացուի, թէ ոչ, չեմ կարող ասել»,- նշել է Կարէն Քոչարեանը:

Յիշեցնենք, որ Մարտի 1-ին Ազատութեան հրապարակում իր ելույթում ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը մասնաւորապէս ասել էր. «Ինչո՞վ է Ծառուկեանը պակաս Իվանիչիլիից, ում յաջողուեց փափուկ իշխանափոխութիւն իրականացնել, կամ նրանցից, ովքեր Եմանուիլիչին թոյլ չտուեցին արտակարգ դրութիւն յայտարարել Կիւեւում: Ժամանակն է, որ բոլոր քաղաքական ուժերը հասարակական կազմակերպութիւնները, քաղաքական շարժումները, պետական ապարատի գիտակից զանգուածը՝ հոգով ու ոտքով ընկալեն ՀՀ փրկութեան համար ներկայումս ստեղծուած գերնպաստաւոր պահի իմաստը, որովհետեւ պահը կորցնելու պատասխանատուութիւնը ընկնելու է բոլորիս վրայ»:

Գալուստ Սահակեան.- «ՀԱԿ-ը Այն Ուժը Չէ, Որ
Կարող է Համախմբել Ընդդիմութեանը»

Հայ ազգային կոնգրէս (ՀԱԿ) կուսակցութիւնը այն ուժը չէ, որ կարող է այսօր համախմբել ընդդիմութեանը: «Ազատութեան» հետ զրոյցում այսպիսի յայտարարութեամբ հանդէս եկաւ Հայաստանի իշխող Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) փոխնախագահ եւ խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը՝ մեկնաբանելով Մարտի 1-ի հանրահաւաքի ժամանակ Ազգային ժողովի ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանի այն յայտարարութիւնը, թէ չի բացառւում, որ խորհրդարանի չորս ոչ իշխանական ուժերը ինչ-որ մի պահ ղեն երկրի նախագահ Սերժ Սարգսեանի պաշտօնակալութեան հարցը:

Ժամանակը նման խնդիր չունի, ասաց ՀՀԿ-ի փոխնախագահն ու աւելացրեց, որ նման

կոչերը մտահոգութեան պատճառ չեն կարող լինել իրենց կուսակցութիւնում: «Որովհետեւ բաւարար կարողութիւնների պակաս, քաղաքական շնչառութեան կորուստ, վերջին հաշուով՝ նաեւ ՀՀԾ-ն փոխել ՀԱԿ-ի՝ մոռացութեան տարու համար... Ոչ իշխանական ուժերը երբեւիցէ չեն միաւորուել, առաւել եւս՝ դրանք բոլորովին այլ գաղափարախօսութիւն եւ սկզբունքներ ունեն, եւ ոչ էլ այդ խնդիրը իրականութեան մէջ կայ», - ասաց Սահակեանը՝ շարունակելով. - «Եւ յետոյ՝ չորս [ոչ] իշխանական ուժերը միասին երբ որ համախմբուած են, դառնում են ընդամէնը իշխող կուսակցութեան 25-30 տոկոսը»:

«Այնպէս որ, գինանոցը դատարկ է, քաղաքական խօսքը՝ պակաս», - նշեց ՀՀԿ-ի փոխնախագահը:

«Արդեօք ԲՀԿ-ի Ակտիւութեան Ետեւում
Քոչարեանի Ականջներն Չ'են Երեւում».-
Անահիտ Բախշեան

«Ժառանգութիւն» կուսակցութեան անդամ Անահիտ Բախշեանը վախենում է, որ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ակտիւութեան ետեւում կանգնած է Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանը: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Անահիտ Բախշեանը՝ անդրադառնալով «ԲՀԿ»-ի՝ այլընտրանք լինելու մասին յայտարարութիւններին:

««ԲՀԿ»-ն լրիւ այլ տեսակ է հանդէս գալիս, Հռոմի պապից աւելի կաթոլիկ: Զգիտեմ՝ ինչքանով է ազնիւ ԲՀԿ-ի այս կեցուածքը, արդեօք դրա հետեւում Քոչարեանի ականջները չեն երեւում: Վախն անընդհատ մէջս կայ», - ասաց նա:

Անդրադառնալով «Ժառանգութեան» կուսակցութեանը, նա ասել էր.

«ԲՀԿ» համագործակցութեանը՝ Բախշեանն ընդգծեց. «Խրթին հարց է: Լաւ չեմ պատկերացնում «Ժառանգութիւն»-«ԲՀԿ» համագործակցութիւնը, բայց համագործակցութիւնը լաւ բան է»:

Իր հերթին, ասուլիսին ներկայ պաշտպանութեան նախկին փոխնախարար Վահան Շիրխանեանը նշեց, որ համախմբումը կը լինի արհեստական կամ «անձնական նպատակների համար միայն»:

Նշենք, որ խորհրդարանական չորս ոչ կողմիցիոն ուժերը սկսել են համագործակցել եւ շատ հարցերի շուրջ միասնական կարծիք յայտնել: Նրանք պատրաստուած են Ազգային ժողովում բարձրացնել կառավարութեանն անվստահութիւն յայտնելու համատեղ պահանջ:

Հայաստանում ենք ապրելու»,- յաւելեց Սարգսեանը:

ԼՈՒՐԵՐ

Ռուսաստան-Արեւմուտք Յարաբերութիւնների Սրուճը Կ'ազդի Զայաստանի Տնտեսութեան

Տնտեսագէտ, կառավարման փորձագէտ Յարութիւն Մեսրոբեանի կանխատեսմամբ՝ Ռուսաստանի եւ Արեւմուտքի յարաբերութիւնների սրուճը կ'ազդի Հայաստանի տնտեսութեան վրայ:

«Նախ, մեզ մօտ շատ մարդիկ աշխատում են Հայաստանից դուրս եւ՝ Միացեալ Նահանգներում, եւ՝ Ռուսաստանում, եւ՝, ինչու չէ, Ուկրաինայում եւ այլն: Այնտեղ ցնցումներ են գնում: Բնական է, որ մարդը, որը ապրում է այս երկրներում, այդ ցնցումը չի կարող չզգալ: Այսինքն՝ վտանգ կայ, որ տրանսֆերտները դէպի Հայաստան քշանան», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Մեսրոբեանը:

Ըստ «Կենտրոնական բանկի տեղեկագիր» պարբերականի՝ անցած տարի բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց մեր հայրենակիցները մօտ 1 մլրդ 607 մլն դոլար փոխանցումներ են կատարել, այդ թվում ԱՄՆ-ից՝ աւելի քան 82 մլն դոլար, Ուկրաինայից՝ աւելի քան 17 մլն:

Մեսրոբեանի խօսքով՝ տրանսֆերտների կրճատումը կը հանգեցնի այլ նաեւ բացասական հետեւանքների. - «Մեզ մօտ արտահանումը մի քանի անգամ քիչ է, քան ներկրումը: Ինչ-որ չափով այդ բացասական սաղդոն կոմպենսացում էր այդ տրանսֆերտների միջոցով: Հիմա տրանսֆերտները մեզ մօտ կը նուազեն, մեր տնտեսութիւնը չի գարգանում, դա բերում է նրան, որ այդ աւելարդին սաղդոն չի լաւանայ: Սա նշանակում է, որ մենք ընդհանուր առմամբ մեզ մօտ ուժեղանալու է արտարժոյթի արտահոսքը Հայաստանից: Սա նշանակում է, որ մեր արժուժային պահուստները քշա-

նալու են, սա նշանակում է, որ մենք ինդիո կ'ունենանք արտաքին պարտքը մեծացնելու: Այս այս շղթան աշխատելու է»:

Ուկրաինայում ծաւալուող իրադարձութիւնների պատճառով, ըստ տնտեսագէտի, Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ յարաբերութիւնների սրուճը հայկական դրամի վրայ էլ ազդեցութիւն կ'ունենայ. - «Եթէ մեզ մօտ արտարժոյթի արտահոսքը սկսի մեծանալ, իսկ դոլարի ներհոսքը սկսի քշանալ, սա նշանակում է, որ մեզ մօտ արտարժոյթի քանակը կը սկսի քշանալ: Իսկ այն, ինչ քիչ է, սկսում է թանկանալ: Սկզբից կարող է լինել դոլար - դրամ փոխարժէքի բարձրացման միջոցով, որը կը խթանի գնաճը»:

Հայաստանի կենտրոնական բանկի տուեալներով, ուրբիւն Հայաստանում նոյնպէս արժեզրկուել է: Փետրուարի 24-ից դրամը ուրբու համեմատ արժեւորուել է մօտ 4 տոկոսով:

«Ազատութեան» հետ զրոյցում ընտանիքներն արտագնայ աշխատանքով պահող մարդիկ տարակուսում էին՝ նման իրավիճակում արժէ՞ մեկնել Ռուսաստան, թէ՞ ոչ:

«Ռուսականով ենք վճարում 30-35 հազար ուրբիւ: Արժեքագրկուել է շատ, առանց այդ էլ ստացածներս մի մեծ բան չէր, հիմա էլ կրկնակի ենք տուժում: Անտոյշ վիճակ է բոլոր խոպանչիների մօտ», - ասաց նրանցից մէկը:

Հարկ է նաեւ նշել, որ ըստ Ազգային վիճակագրական ծառայութեան 2012 թուականի տուեալների, ԱՊՀ-ում Հայաստանի աւելարդին առաջին գործընկերը Ռուսաստանն է, երկրորդը՝ Ուկրաինան:

Ղրիմում Զայ Զամայնի Կեանքը Ընթանում է Բնական Զուճով



Սիմֆերոպոլի փողոցներէն մի

Ղրիմում իրավիճակը նորմալ է, ոչ մի տանկ չկայ ոչ Սիմֆերոպոլի, ոչ Եալթայի փողոցներում, ընդհանրապէս՝ Ղրիմում: Այս մասին NEWS.am-ի թղթակցին յայտնել է Սիմֆերոպոլի հայ համայնքի ղեկավար Վաղարշակ Մելքոնեանը՝ մեկնաբանելով իրավիճակը Ղրիմում:

Ըստ Մելքոնեանի՝ ամէն ինչ իր հունով է ընթանում: Նա նաեւ նշել է, որ Ղրիմի հայ համայնքի պաշտօնական դիրքորոշումը համառուն է Ուկրաինայի հայ համայնքի դիրքորոշմանը, այսինքն՝ ստեղծուած իրավիճակում հայերը

չէզոքութիւն են պահպանում եւ հանդէս գալիս երկրում կայունութեան եւ խաղաղութեան պահպանման դիրքից: Նա նաեւ յաւելել է, որ հայ համայնքի դիրքորոշման վերաբերեալ ոչ մի նոր յայտարարութիւն չի հետեւելու: «Մենք կողմ ենք Ղրիմում ապրող բոլոր ժողովուրդների խաղաղութեանը եւ անդորրին»:

Յիշեցնենք, որ Մարտի 1-ին ՌԴ Դաշնութեան խորհուրդը միաձայն կողմ էր քուէարկել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Ուկրաինայում ուսական գիւնուած ուժերն օգտագործելու նախաձեռնութեանը:

Թուրք Ազգայնականների Կողմից Առաջադրուած Են 2 Զայ Թեկնածուներ

Թուրքիայում

«Ազգայնական շարժում» (MHP) կուսակցութեան կողմից Ստամբուլի Բաբըրքոյի շրջանում ՏԻՄ ընտրութիւններին աւագանութեկնածուներ առաջադրուած 2 հայ թեկնածուներ Ներսէս Երեմեանը եւ էլմաս Կիրակոսը Ստամբուլի հայկական «Ակօս»-ի հետ զրոյցում խօսել են իրենց մասին:

67-ամեայ Ներսէս Երեմեանը նշել է, թէ սովորել է Մար-



Թուրքիայ «Ազգայնական շարժում» կուսակցութեան կողմէ առաջադրուած 2 հայ թեկնածուները՝ Ներսէս Երեմեան եւ էլմաս Կիրակոս

մարայի համալսարանի ատամնաբուժութեան բաժնում, որից յետոյ դասաւանդել է յիշեալ համալսարանում, իսկ հիմա աշխատում է որպէս ատամնաբուժ: «Հայերէն չեմ կարող կարդալ, սակայն շատ լաւ խօսում եմ: Մայրս յոյն է, հայրս՝ հայ: Երբեք Հայաստան չեմ գնացել, առիթ չի եղել: Ես հաւատացեալ եմ, ամէն կիրակի գնում եմ եկեղեցի եւ աղօթում եմ: Թուրքիայում ենք ապրում եւ պէտք է սիրենք մեր երկիրը, չնայած մեր կրօնը տարբեր է», - ասել է Ներսէս Երեմեանը՝ յաւելելով, թէ «Ազգայնական շարժում» կուսակցութիւնից երբեք վատ բան չի տեսել: Բաբըրքոյում ազգայնականների կողմից առաջադրուած յաջորդ թեկնածու էլմաս Կիրակոսը ծնուել է Ամասիայում, սակայն մեծացել է Բաբըրքոյում: Նա պատմել է, թէ ինքը երբեք չի թաքցրել իր հայ լինելը եւ մշտապէս այցելում է եկեղեցի: «Ես ազգութեամբ հայ եմ, սակայն Թուրքիայի քաղաքացի: Հաւատում

եմ, որ Բաբըրքոյում սիրուած եմ: Ընկերներս ստիպում են, որ մտնեմ քաղաքականութիւն: «Ազգայնական շարժում» կուսակցութիւնը հայրենիքը սիրող եւ ազգային փոքրամասնութիւններին յարգող կուսակցութիւն է, այն ռասիստական կուսակցութիւն չէ», - ասել է էլմաս Կիրակոսը:

Նշենք, որ Ընդդիմադիր «Ժողովրդա-հանրապետական» կուսակցութիւնը Բաբըրքոյում եւս 2 հայ թեկնածու է առաջադրել աւագանու ցուցակում՝ Արեւ Զեբեջի եւ Մարգարիտ Դիբմէ:

Իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութիւնը նոյն շրջանում ներկայացրել է 3 հայ թեկնածուի անուն՝ Լեւոն Նորայ Օզանաթ, Անդրանիկ Շիրինօղլու եւ Անդրանիկ Դիբթաշ:

Իսկ «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցութիւնն էլ հենց Բաբըրքոյի քաղաքապետի թեկնածու է առաջադրել ազգութեամբ հայ Նուարդ Բաբըրջօղլուին:

Յայտնի է Դարձել 2013-ին Թուրքիա Այցելած Զայաստանցիների Թիւր

Թուրքիա մեկնող հայաստանցիների թիւը 2013-ի Յունուար-Դեկտեմբեր ամիսների ընթացքում կազմել է 73 365 հոգի:

Ինչպէս NEWS.am-ը տեղեկանում է Թուրքիայի մշակոյթի եւ տուրիզմի նախարարութիւնից, 2013-ի 12 ամիսների ընթացքում Թուրքիա այցելած հայաստանցիների թիւը 3,4 տոկոսով աճել է նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ:

2013-ի Դեկտեմբերին Թուրքիա այցելած հայաստանցիների թիւը կազմել է 5564 հոգի, որը 1,05 տոկոսով աւելին է նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ:

Թուրքիա կատարած այցելութիւններում կտրուկ աճ են գրանցել Ղրղըզստանի եւ Բելառուսի քաղաքացիները: 2013-ին Թուրքիա է այցելել Ղրղըզստանի 64905 քաղաքացի, որը նախորդ տարուայ համեմատ աւելին է 51 տոկոսով: Այցելութիւնների աճով (45 տոկոս) 2-րդ տեղում յայտնուել է Բելառուսը, որի 200 հազար 659 քաղաքացի 2013-ին այցելել են Թուրքիա: Նշենք, որ 2012-ին Թուրքիա է այցելել 70 956 հայաստանցի:

Ուղեւորութիւն Դեպի Պատմական Զայաստան

Նոր Սերունդ Մշակութային Միութեան հիմնադրութեան 60-ամեակի տօնակատարութեանց շարքին, ծրագրուած է ուղեւորութիւն դեպի պատմական Զայաստան, Յուլիս 17էն մինչեւ Յուլիս 31, 2014:

Արձանագրութեանց եւ յաւելեալ մանրամասնութեանց համար կապ հաստատել՝ հեռաձայնով 818/590-9293 եւ կամ իմակոյժnorserount54@gmail.com

ԸՆԿ. ՅԱԿՈՒ ՏԻԳՐԱՆԵԱՆ.-

«ՅԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱԻՄԱՆ ՄԻԱԿ ԾԱՆԱՊԱՐՅՈՒ
ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՍԸ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ Է»

Ստորեւ կը ներկայացնենք ՄԴԶԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեանի հարցազրոյցը կուսակցութեան Մամուլի Դիւանին տրուած:

Յարց.- Ինչպէ՞ս կը գնահատէք Յայաստանի ներքին քաղաքական ներքին իրավիճակը:

Պատ.- Հայաստանի քաղաքական ներքին իրավիճակը լարուած է: Առաւել եւս օրէ օր կը ծանրանայ ժողովուրդին տնտեսական եւ ընկերային վիճակը: Ի տես այս բոլորին, արտառոց երեւոյթ է որ քաղաքական վերնախաւին մէջ երկխօսութիւն գոյութիւն չունի: Այլ, ընդհակառակը, մենք ակնատեսը կ'ըլլանք թէ ինչպէս իրար հանդէպ կը դրսեւորուին ատելութիւնն ու թշնամանքը: Քաղաքականութեան մէջ գործածուող բառապաշարը յոյս չի ներշնչեր. այլ՝ հարցերուն դարձման գտնելու փոխարէն, կարծէք կրակի վրայ իւր կը թափուի: Առաւել եւս լարուածութեան կշռոյթը շատ արագ կ'ընթանայ եւ այս միջոցաւ ոչ մէկ օգուտ կրնայ բերել հայրենիքին եւ ժողովուրդին առջեւ ծառայած բոլոր ինդիւիւստրիաներուն:

Յարց.- Խորհրդարանական ընդդիմութիւնը արդէն կը գործէ միաւորուած եւ կը փորձէ դառնալ այլընտրանքային ուժ:

Պատ.- Խորհրդարանական ընդդիմութեան համագործակցութիւնը ես չեմ կարծեր որ ունի ամուր եւ առողջ հիմքեր. ան հիմնուած է «թշնամի թշնամի իմ բարեկամս է» հասկացողութեան վրայ: Այլապէս ինչպէ՞ս կրնայ թարգմանուիլ, օրինակի համար, ԲԶԿ-ՀԱԿ համագործակցութիւնը, երբ այս կուսակցութիւններու ղեկավարները հանրութեան առջեւ իրար ձեռք սեղմելու դեռ պատրաստ չեն: Արդեօք փոխադարձ անվստահութեան պատճառով է ան պայմանաւորուած, թէ ոչ հանրութեան կողմէ անընդունելիութեան: Ուրիշ այլ օրինակ՝ արդեօք չորսն ալ համաձայն են Մաքսային Միութեան անդամակցութեան անշուշտ՝ ոչ:

Յարց.- Ընկ. Տիգրանեան, ի տես այս բոլորին ո՞րն է լուծումը. ինչպէ՞ս կարելի է երկիրը այս տնտեսական, քաղաքական եւ ընկերային ճգնաժամէն դուրս բերել:

Սուրիահայերու Բնակեցման Մասին

Շարունակուած էջ 1-էն

Քաղաքականութիւն կը վարէ: Ի պատասխան այս նամակին Լեւոնային Ղարաբաղի Արտաքին Գործոց նախարարութիւնը հանդէս եկաւ յայտարարութեամբ հակադարձելով Ատրպէյճանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարին ու յայտնեց, «տարուած լինելով հակամարտութեան հոլոթիւնը ինքզինքներէ եւ միջազգային հանրութիւնն ապակողմնորոշելու իր մոլուցքով՝ Ատրպէյճանի արտաքին գործերի նախարարը չի վարանում նոյնիսկ դիմել ակնյայտ կեղծիքներու ու ապատեղեկատուութեան: Մասնաւորապէս, բաւական է նշել, որ նամակին կից ՄԱԿ-ի քարտուղարութեանը փոխանցուած այսպէս կոչուած «վերաբնակեցուած անձանց» ցուցա-



Պատ.- Իրավիճակը շատ լուրջ է, ժողովուրդը կորսնցուցած է իր յոյսերը ապագայի հանդէպ. արտագաղթը հասած է Հայաստանի անվտանգութիւնը խաթարելու աստիճանին. ժողովուրդին տնտեսական եւ ընկերային վիճակը կը վատթարանայ օրէ օր, գիւղերը կը պարպուին, գործի հնարաւորութիւնները սահմանափակ են, ագրիկոլական սպառնալիքները օրէ օր կ'աւելնան: Այս բոլորը տեսնելով, մէկ ճանապարհ կայ դուրս գալու այս ճգնաժամէն, այն ալ ազգային միասնական կառավարութեան մը ստեղծումն է: Բոլորս, իշխանութիւն թէ ընդդիմութիւն, պատասխանատու ենք դուրս բերելու երկիրը այս ահաւոր վիճակէն. սա արդէն արտակարգ իրավիճակ է: Ազգային միասնական կառավարութեան գոյառումը առաջին հերթին պիտի օգնէ հանդարտեցնելու ներքին լարուածութիւնը, ժողովուրդին մօտ պիտի վերականգնի յոյսը, լաւատեսութեամբ պիտի դիմաւորուի Սփիւռքի կողմէ, եւ կայունութեան որպէս արդիւնք՝ յառաջընթաց պիտի արձանագրէ տնտեսութիւնը: Հետեւաբար, կը կրկնեմ՝ միակ ճանապարհը ազգային միասնական կառավարութեան մը ստեղծումն է օր առաջ եւ մենք Հնչակեաններս պատրաստ ենք պատասխանատուութեան մեր բաժինը վերցնելու:

Յարց.- Նախագահ Քոչարեան վերջերս տարբեր առիթներով հանդէս կու գայ հարցազրոյցներով. որեւէ տեղաշարժ կրնա՞յ ունենալ իր քաղաքական դաշտ վերադարձով:

Պատ.- Նախագահ Քոչարեանի հարցազրոյցները դարձած են աւելի

յաճախակի. ան ըստ երեւոյթին աստիճանաբար աշխուժացման ճանապարհը բռնած է, որ կրնայ յանգիլ իր քաղաքական դաշտ վերադարձին մինչեւ յաջորդ նախագահական ընտրութիւններ: Ան ընտրած է քաղաքական գնահատականներէ հեռու մնալը, եւ փոխարէնը իր արժեւորումները կեդրոնացուցած է առ այժմ գոտ տնտեսական ոլորտէն ներս: Նոյնիսկ վերջերս Մաքսային Միութեան հետ կապուած իր տուած վերջին ասուլիսով ոչ մէկ անդրադարձ կար իշխանութեանց առած որոշումին քաղաքական շարժառիթներուն մասին, այլ՝ կեդրոնանալով միայն տնտեսական բաժնին: Մենք բոլորս գիտենք թէ Հայաստանի Մաքսային Միութեան ճանապարհը որդեգրելը առաւելաբար իր քաղաքական պատճառները ունէր: Այնքան ատեն որ Քոչարեան քաղաքական գնահատականներէ հեռու կը մնայ, անոր տուած յայտարարութիւնները անդրադարձ չեն կրնար ստեղծել գետնի վրայ. իսկ երբ ան ի վիճակի կարենայ ըլլալ քաղաքական գնահատականներ տալու, ես կը կարծեմ որ իրեն համար ժամանակը դժուար թէ հասունայ:

Յարց.- Շատ քննարկուող միւթերն մէկը Յայաստանի անդամակցութեան հարցն է Մաքսային Միութեան: Եւրոպայի ըստ երեւոյթի ընդվզած է Յայաստանի առած որոշումէն եւ կը փորձէ տարբեր տեսակի ճնշումներ բանցնել Յայաստանի վրայ:

Պատ.- Հայաստանի որոշումը՝ միանալու Մաքսային Միութեան, առնուած քայլ մըն էր ելլելով գոտ Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքէն եւ շահերէն: Ես համաձայն չեմ որ այդ արդիւնք էր ճնշումներու, այլ՝ Հայաստանի շահերէն բխող քաղաքական ուղղութեան: Եւրոպան եւ Արեւմուտքը պարտաւորութիւն եւ պատասխանատուութիւն ունին պահպանելու եւ սատար կանգնելու Հայաստանի բարօրութեան:

Յայաստանի Սօցեցումները

Շարունակուած էջ 1-էն

ցային յարաբերութիւնները Ռուսաստանի հետ, զարգացնելու բարեկամական գործընկերութիւնը Ամերիկայի Միացեալ Նահանգներին հետ, խորացնելու փոխգործակցութիւնը եւրոպական, ասիական երկրներին հետ, ընդլայնելու փոխարաբերութիւններին աշխարհագրութիւնը», - յայտարարած է էրուարդ Նալբանդեան:

«Մեր դիւանագիտութեան ուշադրութեան կենտրոնում է գտնուած տնտեսական, մշակութային, հումանիտար կապերի զարգացումը, խորհրդարանական դիւանագիտութեան օժանդակումը, Հայաստան - Սփիւռք կապերի ամրապնդումը, ապակենտրոնացուած համագործակցութեան զարգացումը, արտերկ-

ճնշումներ բանցնելու փոխարէն, Եւրոպայի պէտք է քաջալերէ որպէսզի Հայաստանը դառնայ տարածաշրջանին մէջ օրինակելի երկիր իր ժողովրդավարութեամբ, ազատութեամբ, խաղաղութեամբ եւ մարդու իրաւունքներու հանդէպ յարգանքով:

Պէտք է մտնալ, որ եթէ այսօր Եւրոպան կը վայելէ ազատութիւն, կայունութիւն եւ բարգաւաճում, անոր մէջ ներդրում ունին նաեւ հայերը իրենց 200.000 զոհերու արիւնով: Մանուշեանը անոնցմէ մէկն էր: Պէտք է կարգալ Մանուշեանի վերջին նամակը ուղղուած իր ծնողներուն՝ գնդակահարութենէն մի քանի ժամ առաջ, ուր կոչ կ'ուղղէր ատելութեան եւ վրէժխնդրութեան տեղ չտալ նոյնինքն զինք սպաննող գերմանացի ժողովուրդին հանդէպ:

Յարց.- Վերջերս Ապուլլաի Օճալան կոչ ցամակով մը հանդէս եկաւ հայութեան: Ի՞նչ է ձեր կարծիքը անոր բովանդակութեան մասին:

Պատ.- Ինչպէս գիտէք, Օճալան իր նամակը հրատարակեց Պեսէ Հոգաթի այդ տխրահռչակ յայտարարութենէն ետք, որ օրին Հնչակեան կուսակցութեան Կեդրոնական վարչութիւնը յայտարարութեամբ դատապարտեց զայն: Անկեղծ ըլլալու համար, Օճալանի նամակ-յայտարարութեան մէջ ոչ մէկ նորութիւն կար: Այն պնդումներուն որ ան «ցեղասպանութիւն» բառը օգտագործած է, կ'ուզեմ լինեցնել որ իր ղեկավարած կուսակցութիւնը՝ ԲԲԲ-ն 1982-էն սկսեալ ամէն առիթներով եւ իր մամուլով միշտ ալ անդրադարձած է Հայոց Յեղասպանութեան: Պեսէ Հոգաթի յայտարարութենէն եւ անոր յաջորդող Օճալանի նամակէն մենք՝ Հնչակեաններս մտավախութիւն ունինք, որ քիւրտ ժողովուրդը դէպի հայ-թրքական հարցին մէջ ներքաշելու փորձեր տեղի կ'ունենան: Մեր ցանկութիւնն է որ մեզի շատ սիրելի քիւրտ ժողովուրդը անցեալի փորձառութիւնը իր աչքին առջեւ ունենայ եւ ըստ այնմ շարժի:

րում հայկական պատմամշակութային ժառանգութեան պահպանումը, տարբեր երկրներում բնակուող մեր քաղաքացիների շահերի պաշտպանութիւնը, յատկապէս ճգնաժամային իրավիճակներում յայտնուած մեր հայրենակիցներին սատարումը», - ընդգծած է Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը՝ շարունակելով. - «Այսօր Սիրիայում պատերազմի պայմաններում աշխատող կամ տարբեր հարթակներում մեր երկրի շահերին վնասող տարաբնույթ փորձերին հակազդող, մեր Հայրենիքի դրօշը բարձր պահող հայ դիւանագետները դիւանագիտական ծառայութեան համակարգի այն դերակատարներն են, առանց որոնց այս համակարգը չի լինի կուռ եւ կանգուն»:

Save Support Sustain SYRIAN ARMENIAN RELIEF FUND www.syrianarmenianrelieffund.org

ՊԱՏԵՐԱԶՍ ԵՒ ... ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏԵՐԱԶՍ

Պատերազմներուն աւարտը միայն նահատակները կը տեսնեն...

Պղատուն

ԷՏՈՒԱՐՏ Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Իմաստուն եղած են Հին Աշխարհի փիլիսոփաները: Անոնց լաւագոյն ներկայացուցիչներէն Պղատունը, իր միտքի պայծառութեամբ ապագան ոչ թէ կանխատեսելու կամ կանխագգալու, այլ յստակօրէն տեսնելու հանձարեղ ունակութեամբ՝ չէր կրնար սխալիլ: Մեռածները այլեւս չեն տեսներ, բայց ապրողին միշտ ալ ուղեկից պիտի ըլլան պատերազմն ու արհաւիրքը:

Այո, մարդկութեան իր ողջ գոյութեան ընթացքին ուղեկցող պատերազմները երբեւէ չեն դադրած եւ մեծ փիլիսոփան իր եզրահանգումը գուցէ դաժան, բայց ճշմարտացի ձեւակերպած է:

Անկարելի է եւ կամ «կոյր պէտք է ըլլալ մտօք», չտեսնելու համար այդ ձեւակերպման մէջ խտացած ցաւը, ախտասանքն ու նաեւ... անկարողութիւնը: Այո, մարդկութեան առաւել գիտակից հատուածին անկարողութիւնը՝ մարդկութեան գալիքին մէջ թէկուզեւ չնչին բան մը շտկելու կապակցութեամբ:

Անհնար է չնկատել ցաւը Պղատունի խօսքերուն մէջ, ինչպէս որ անհնար է չտեսնել՝ իրենք գիրենք Աստուծոյ փոխանորդ համարող Հին Աշխարհի հարիւրաւոր կայսրերու, խաներու, արքաներու, զօրավարներու անթաքտ զուգորթիւնը, երբ անոնք «Թամբի վրայ» էին, եւ անասնական վախը, սարսափը կամ լաւագոյն պարագային խոր զղումը, երբ կը կանգնէին անխուսափելի կործանման կամ մահուան դէմ յանդիման:

Ժամանակագիրներու, պատմիչներու, աւելի ուշ նաեւ թատերագիրներու, գրողներու եւ բեմադրիչներու «ճիգով» անոնց կերպարները դարերու ընթացքին կը հերոսացուէին ու կը պարուրուէին խորհրդաւորութեան գայթակղիչ շղարշով: Սակայն եթէ միայն մէկ պահ ձերբազատուէին կախարդանքի դիւթիչ կապանքներէն, անհնար պիտի ըլլար չտեսնել, թէ որքան դժբախտ ու միայնակ էին անոնք, որքան լքուած էին առաջին իսկ անյաջողութենէն ետք եւ որքան անզօր ու սարսափած էին, մահուան չարագոյժ ուրուականին դիմաց:

Այդպէս էր... եւ եթէ մեր օրերու «Աստուծոյ փոխանորդներն»

ալ պահ մը փորձեն ազատագրուիլ յիշեալ կախարդանքի դիւթիչ կապանքներէն՝ վստահաբար իրենք ալ կը համոզուէին, թէ որքան ունայն է «փառքը» եւ որքան անզօր են իրենք, եթէ ոչ մարդոց, ապա պատմութեան դատաստանին առջեւ: «Veni, vidi, vici»՝ «Եկայ, տեսայ, յաղթեցի»... Հռոմի Սենատին իր արիւճանահեղ յաղթանակներուն մասին այսպէս կը տեղեկացնէր Հին Աշխարհի հզօրագոյն տիրակալներէն՝ Հռոմէն ալ գոռոզ, Հռոմէն ալ ամբարտաւան Յուլիոս Կեսարը, որուն ապրած ժամանակաշրջանին Հին Աշխարհի երկու երրորդը ստրկացուած էր:

Չկայ հիմա Հռոմէական կայսրութիւնը, Յուլիոս Կեսարը ամբոխի աչքերուն առջեւ զազանաբար դաշունահարեցին այն ձեռքերը, որոնք զայն երկինք բարձրացուցած էին, իսկ եթէ այսօր աշխարհի տարածքին հարցախոյզ մը ընեն եւ մարդոց հարցնեն, թէ ինչ կը նշանակէ «Եկայ, տեսայ, յաղթեցի», մեծամասնութիւնը / այն ալ միայն ծխախոտի սիրահարները / պիտի պատասխանեն, թէ ատիկա ամերիկեան Marlboro յայտնի ծխա - խոտատեսակին այցեքարթն է:

Առ այսօր հազարաւոր հնագէտներ ապարդիւն փորձեր կ'ընեն գտնելու Կեսարէն ոչ նուազ «աշխարհակալ» եւ ոչ նուազ արիւնարբու Չինգիզ-խանին գերեզմանը, որովհետեւ ինքզինք աշխարհի տէր-տիրակալ կարծող սովորական մահկանացուն շիրմաքարի մըն ալ չարժանացաւ: Յոյժ գաղտնի կը պահուէր թաղուած տեղը, որպէսզի «արժանի ժառանգորդներ»-ը իր երկրային «քաջագործութիւններ»-ուն համար յետագային չանարգէին երբեմնի հզօրագոյն խանին գերեզմանը:

Օսմանեան կայսրութեան արիւնալի պատմութեան ամէնէն զօրեղ սուլթանն ու փատիշահ Սուլէյման Փառահեղը մահուան մահիճէն կը հրամայէ, որ իր դագաղը իր անձայրածիր կայսրութեան լաւագոյն բժիշկները տանին դամբարան: Հարցին, թէ ինչու բժիշկները եւ ոչ թէ զօրապետերն ու կայսրութեան բարձրագոյն ներկայացուցիչները՝ ինքզինք փառահեղ համարող սուլթանը կը պատասխանէ. «Թող բոլորը տեսնեն, որ նոյնիսկ աշխարհակալ սուլթանը եւ լաւագոյն բժիշկները ոչինչ են

ամենազօր մահուան դիմաց»:

Ուրիշ գեղեցիկ ու ճշմարտացի բաներ ալ ըսած է սուլթանը իր մահուան մահիճին մէջ: Սակայն խօսքը գեղեցիկին մասին չէ, անշուշտ: Այդպիսի արտայայտութիւններ ունեցած են աշխարհի գրեթէ բոլոր վաղանցուկ տիրակալները՝ Ներոնէն Նա - փոլէոն եւ Ռոպէսպիէրէն մերօրեայ նախագահ ու վարչապետները...

Պարզապէս, եթէ մէկ կողմ նետենք խորհրդաւորութեան գայթակղիչ շղարշը, որով իրենց կենդանութեան օրով պարուրուած էին այս մեղաւոր աշխարհի ամէնէն մեղաւորները՝ անոնց խօսքի անկեղծութեան, դժուար պիտի ըլլար հաւատալ:

Ինքզինք Փառահեղ համարող սուլթանը մինչ այդ տեղեակ չէ՞ր, միայն մահուան մահիճին մէջ՝ հասկցաւ, որ անզօր է պատմութեան ու բնութեան առջեւ...

Ինքզինք աստուածացուցած Յուլիոս Կեսարը չէ՞ր գիտեր, միայն դաշունահարուելու ատեն իմացաւ, որ եթէ ինք կրնար գալ, տեսնել ու յաղթել, ուրեմն օր մը պիտի յայտնուէր իրմէ աւելի ուրակալ, աւելի փառասէր ու արծաթասէր մէկը, որ նոյնպէս... պիտի գար, տեսնէր ու յաղթէր...

Տասնութերորդ դարու աւարտը նշանաւորուեցաւ Ֆրանսական Մեծ Յեղափոխութեամբ, որ գլխիվայր շրջեց ոչ միայն Ֆրանսայի, այլեւ ամբողջ Եւրոպայի պատմութիւնը: Ֆրանսայի թագաւոր Լիւդովիկոս 16-րդը թէեւ հրաժարեցաւ կառավարումի բացարձակ միապետական համակարգէն եւ սահմանադրական միապետութեան ձեւը որդեգրեց, սակայն զինք այդ ալ չփրկեց արեան ծարաւ ամբոխի դաժան հաշուահարգարէն:

Աւելին, ամբոխի ցնծագին բացազանուութիւններու ներքոյ իր հետ միասին գլխատուեցաւ նաեւ կինը՝ Ֆրանսայի թագուհի Մարի Անթուանէթը:

Ասիկա ա'յն թագուհին էր, որ ամենակարող կը կարծեր ինքզինք, եւ սովամահութեան եզրին կանգնած ժողովուրդին «հաց չկայ» աղերսանքին լիտիաբար պատասխանած էր թէ՛ «Հաց չկայ, դուք ալ կաթօ կերէք»:

Յեղափոխութեան ղեկավարները Մաքսիմիլիան Ռոպէսպիէրը, Ժորժ Տանթոնը եւ Ժան Փոլ Մարատն էին: Իրենց տիրոջ արեան գինով իշխանութեան եկած եւ բացարձակ իշխանութենէն արագօրէն հարբած եռեակը, սակայն, շատ շուտով անբեկ-չուլութեան խաւարի մէջ թաղեց Ֆրանսան, որուն զոհ դարձան երջանիկ օրեր

ակնկալող երեք հարիւր հազարէն աւելի ֆրանսա-ցիներ:

Գանք, սակայն, առաջնորդներուն: Ժան Փոլ Մարատը իր սեփական տան մէջ սպանուեցաւ՝ մինչ օրս լիովին չպարզաբանուած հանգամանքներու տակ, բայց մինչ այդ, իշխանութեան գալու առաջին իսկ օրերէն «Ժողովուրդի բարեկամ»-ը / այդպիսին էր անոր պատուանունը / քոնվենթէն պահանջած եւ ստացած էր 260.000/ երկու հարիւր վաթսուս հազար / մարդու մահապատիժի ենթարկելու իրաւունք, որ մասամբ միայն կրցած էր իրագործել:

Յետոյ Ռոպէսպիէրը, որ «Անկաշառ» պատուանունին արժանացած էր, կը հրամայէ մահապատիժի ենթարկել իր նախկին մտերիմն ու գործընկերը՝ Ժորժ Տանթոնը: Երբ վերջինս Ռոպէսպիէրին տան մօտէն դէպի կառափնարան կը տանէին՝ Տանթոնը սայլին վրայէն կը պոռայ. «Ռոպէսպիէր, քեզի՛ ալ նոյն ճակատագիրը կը սպասէ, իմ ետեւէս պիտի քաշեմ քեզ...»:

Մարատն ու Տանթոնը չէին գիտեր կամ Ռոպէսպիէրը չէ՞ր գիտեր, որ պատասխան պիտի տային հարիւր հազարաւոր անմեղ մարդոց արեան համար...

Անշուշտ Տանթոնը չէր սխալեր: Երեք ամիս ետք էր...

«Երբ Ռոպէսպիէրը մահապատիժի կը դրկէր իր զինակիցները, անոր հմայքը անուշիկ էր: Բայց երբ միայն քանի մը ձայնի գերակշռութեամբ իշխանութենէ գրկուեցաւ, ամբոխը նախկին կուռքին ուղեկցեցաւ դեպի կիլոթին /գլխատման համար նախատեսուած սարք / անէճքներու նոյնպիսի տարափով, որոնցմով հեղեղած էին «Անկաշառ»-ին նախկին զոհերը»:

«Դուն դժոխքէն յառնած հրէշ ես: Վերադարձիր գերեզման, եւ թող քեզ ճգմէ Ֆրանսայի կանանց ու մայրերու անէճքը»:

Աստիք վերջին նախադասութիւններն էին, որ գլխատումէն առաջ լսեց Ռոպէսպիէրը:


...Այս պատմութիւնը գրեթէ նոյնութեամբ պիտի կրկնուէր աւելի քան դար մը ետք՝ իր մէջ ներառելով Եւրոպան, Ռուսական, Օսմանեան կայսրութիւնները, ապա նաեւ ողջ աշխարհը:

Դարձեալ գլուխ պիտի բարձրացնէր «դժոխքէն յառնած հրէշը», որուն համար դաս պիտի չըլլար Ֆրանսական Յեղափոխութեան առաջնորդներուն ճակատագիրը, ինչպէս, որ անոնց համար ալ դաս չէր եղած Յուլիոս Կեսարի, Չինկիզ-խանի եւ շատ ու

Մար. ք էջ 18


Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs


<p>6300 Wilshire Blvd, Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave, Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403b
--	---	---



A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեղաւ է

Coverage & Protection should be on the top of your priority list.



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ԱՐՏԱԳԱՂԹԻ ԱՐՅԱԻՐՔԸ. ՄԻՆՉԵՒ ԵՐԲ ՊԻՏԻ ԼՈՒՆ ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՈՍԿԱՆ ՄԻՏԻԹԱՐԵԱՆ

Երկար տարիներու ազնիւ բարեկամէն ստացայ հետեւեալ հարցադրումը. «Ինչո՞ւ ձայն չեն բարձրացներ մեր հոգեւոր ղեկավարները, մասնաւորաբար մեր կաթողիկոսները, եւ չեն դատապարտեր քաղաքական իշխանութեանց անհոգութիւնն ու անտարբերութիւնը արտագաղթի այս ահաւոր չարիքին դէմ»:

Փոխանակ ուղղակի բարեկամիս պատասխանելու, նիւթը շատ այժմէական նկատելով, նախընտրեցի մտածումներուս բաժնեկից դարձնել մեր համասփիւռ հայութիւնը, որ այդքան ալ մտահոգուած չ'երեւիր ներկայ քաղաքական պայմաններու ետեւեւին մէջ, անշուշտ աւելի յարմար պիտի ըլլար ըսել՝ իստանաշիփութեան մէջ, եւ զբաղած է իր աւորեայ մտահոգութիւններով եւ գործերով:

Աշխարհը շարժման մէջ է եւ ժողովուրդներ դարբերու ընթացքին միշտ ալ գաղթած են աւելի լաւ կենսական պայմաններ որոնելու համար: 2010 թուականի վիճակագրութեան համաձայն, 214 միլիոն մարդ, այլ խօսքով 3 տոկոսը աշխարհի բնակչութեան, կ'ապրի իր երկրէն դուրս, երեւոյթ մը որ կը մտահոգէ թէ՛ զարգացած եւ թէ՛ զարգացման ընթացքի մէջ եղող երկիրները: Մտահոգութեան գլխաւոր պատճառներէն մէկը այն է, որ գաղթողներուն մեծամասնութիւնը երիտասարդ կանայք են, որոնք սերունդ պիտի հասցնէին իրենց տուեալ երկիրներուն մէջ:

Նոյնքան մտահոգիչ է ներքին գաղթը, երբ մարդիկ կը թողուն իրենց գիւղերը եւ կ'իջնեն կեդրոնական քաղաքներ, աւելի բարեկեցիկ կեանք մը ունենալու ակնկալութեամբ: Այստեղ եւս պատճառները բազմազան են. բնութեան արհաւիրքներ, (Չուրերու չորդում, սաստիկ ձիւն, երաշտ) անգործութիւն, միջոցներու բաժանման անհաւասարութիւն եւ այլն:

Գաղթողներուն մեծամասնութիւնը կը թողու իրենց երկիրը, փնտռելու համար տնտեսական եւ ընկերային աւելի լաւ պայմաններ: Տնտեսական պայմաններ փնտռող անձերը ամենատուար խումբն են գաղթականներու: Համաշխարհայնացումը (globalization) պատճառ կը դառնայ որ աշխատող ոչժեր շարժման մէջ ըլլան, նոյն ատեն պատճառ ըլլալով աշխատող դասակարգի ծննդաբերութեան աճումի կանխարգիլումին: Այն երկիրները, որոնք անցեալին արտագաղթ ունէին, այսօր ենթակայ են ներգաղթի՝ իրենց երկիրներուն մէջ. օրինակի համար՝ Արժանթինը, Իրլանտան եւ Հարաւային Քորէան:

Միջազգային Գաղթականական կազմակերպութեան (International Organization for Migration) համաձայն, միլիոնաւոր մարդիկ կը գաղթեն այսօր, առանց օրինական թուղթեր ունենալու: Նմանօրինակ գաղթականներ, շատ յաճախ կը ձեռնարկեն վտանգաւոր ճամբորդութեանց եւ յաճախ թիրախ կը դառնան մաքսանենգներու, եւ պարտաւորուած կ'ըլլան աշխատելու եւ ապրելու շատ վատ եւ վտանգաւոր պայմաններու տակ: Իրենց ապօրէն կեցութիւնը պատճառ կը դառնայ, որ չկարենան բողոքել իրենց հանդէպ գործադրուող անարդարութեանց եւ անօրինութեանց դէմ:

Վերջին կէս դարուն, նկատելի դարձած է որ կանայք շատ աւելի կը գաղթեն, քան թէ՛ այր մարդիկ: Կանայք այսօր գաղթականներու 50 տոկոսը կը կազմեն ընդհանրապէս, սակայն կարգ մը երկիրներու մէջ անոնց թիւը կը բարձրանայ 70 կամ 80 տոկոսի: Անոնք պարտաւորուած կ'ըլլան աշխատելու շատ աւելի նուազ աշխատավարձք վճարող գործերու մէջ, ինչպիսին են տնային սպասարուութիւնը եւ հետեւաբար ենթակայ խոշտանգումներու, առեւանգումներու եւ բռնաբարութեանց: Կանայք մանաւանդ ենթակայ են սեռային մարմնավաճառութեան, որ նկատուած է պիլիոններ արժող համաշխարհային գործառնութիւն մը: Դժբախտաբար մարմնավաճառ այս կանայք ենթակայ են սեռային խոշտանգումներու, բռնակալութեան, սեռային խտրելով վարակման եւ շատ յաճախ՝ միջոցն ալ չեն ունենար բժշկական խնամքի:

Գաղթականութիւնը շատ յաճախ ժամանակաւոր է, եւ բոլոր

անոնք, որոնք կ'արտագաղթեն՝ կը պահեն կապը իրենց հայրենիքին հետ: Մինչ գաղթականներ կարեւոր ներդրումներ կը կատարեն գիրենք հիւրընկալող երկիրներուն մէջ, նոյն ատեն սակայն անոնք նիւթական, ճարտարարուեստական եւ ընկերային ներդրումներ կ'ունենան նաեւ իրենց հայրենիքին ներս, նպաստելով հայրենիքի տնտեսական յառաջխաղացքին, ինչպէս նաեւ կը նուազեցնեն այնտեղ տիրող աղքատութիւնը: Գաղթականներու ներդրումը մեծ դրամագլուխ է մանաւանդ նոր զարգացող երկիրներուն համար, նամանաւանդ նախկին Սովետական համայնավար հանրապետութիւններէն ներս:

Միջազգային տուեալներու համաձայն, առաւել քան 500 պիլիոն տոլար փոխադրուած է դէպի նոր զարգացող երկիրները, եւ այս գումարը կ'աճի տարուէ տարի: Շատ հաւանական է նաեւ՝ որ այս գումարին կրկինը կը փոխանցուի դէպի այդ երկիրները՝ ո՛չ օրինական ճամբաներով: Հետաքրքրական է նշել այստեղ, որ կանայք շատ աւելի դրամ կը փոխանցեն իրենց ընտանիքի հարազատներուն՝ քան այր մարդիկ: Այս բոլոր ներդրումները

կը նպաստեն որ ընտանիքներ բարեկեցիկ կեանք ունենան, երեխաներ դպրոց յաճախեն, մէկ խօսքով՝ ընտանիքներու կենսամակարդակը կը բարձրանայ:

Դժբախտաբար մեր ցաւը մեր տան մէջ է, այսինքն մեր միակ յոյս եւ ապաւէն՝ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ ՆԵՐՍ Է: Երկիրը մօտ է արդէն ժողովրդագրական աղետալի վիճակի: Ամուսնութիւններու թիւը նուազած է եւ բնականաբար նուազած է նաեւ նորածիններու քանակը: Շիրակի մարզպետարանի առողջապահութեան բաժնի պետ՝ Հայկանոյշ Աւետիսեանի փոխանցած տեղեկութիւններու համաձայն, 2012-ի համեմատ 2013 տարուան ընթացքին ծնունդներու քանակը մարդէն ներս նուազած է աւելի քան 100 տոկոսով, իսկ Գիւմրիի մէջ աւելի քան 400 տոկոսով:

Հայկանոյշ Աւետիսեան ծնունդներու թիւի նուազումը կը կապէ գլխաւորաբար արտագաղթի հետ: Արդե՞օք միակ պատճառը այդ է՝ չենք կարծեր: Պետական տուեալներու համաձայն, 2013 թուականի Յունուարէն մինչեւ Սեպտեմբեր ամիսներու ընթացքին Հայաստանէն

Մար.ք էջ 20



**ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿՐ ՀԻՒՐՆԱԿԱԼԷ ԵՒ Կ՝ՈՂՋՈՒՆԷ
ստանալէ յետոյ ծննդավայրի Ս. Նշան վանքին մէջ (1685-1691) կը մեկնի էջմիածին. իսկ 1695ին երթալով Հալեպ եւ ծանօթանալով Կաթողիկէ կրօնաւորներու կը մտադրէ հիմնել իր միաբանութիւնը: 1697ին կը գտնենք զինք Պոլիս, ուր 1700ին ութը աշակերտներու գաղտնի կաթողիկոսութիւնը քարոզելով 1706ին կը հիմնէ միաբանութիւնը: Ապա, 1706ին տեղուցն դաւանական հալածանքներէն խուսափելով իր հետեւորդներուն հետ կը հեռանայ Պոլսէն եւ 1717ին վերջնականապէս կը հաստատուի Վենետիկի Սուրբ Ղազարու կղզիին վրայ իր հետ տանելով նաեւ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ շարակնոցները: Միւթար Աբբահայրը (Տիրոջ ստացած է Հոռոմի Պապին 1712ին) ըլլալով նաեւ քաջամուտ շարակնագետ ու երաժիշտ, ինք եւս յօրինած է իր կարգին, իր եկեղեցիին ու միաբա-

նութեան համար հոգեւոր երգեր:

Ուստի, ահա թէ ինչու Միւթարեան Միաբանութեան կողմէ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ համար դասաւորուած եւ պատրաստուած Շարակնոցին բովանդակութիւնը այնքան նման է Հայց. Առաքելական Եկեղեցւոյ գործածած Շարակնոցներուն՝ մեծաղիր «Ձայնաբաղ» ու աւելի դիւրութեամբ գործածելի փոքր չափի «Ձեռագ» Շարակնոցներուն:


Միւթարեան Միաբանութիւնը ոչ միայն կազմեց իրեն յատուկ Շարակնոցը, այլ ուսումնական գիտաշխատանքներով հիմը դրաւ շարակնագիտութեան որմէ յետոյ երկու երանեալ Կոմիտաս վարդապետ եկաւ շարակնագիտութեան խոսքի դաշտերը հերկելու, սակայն դժբախտ ճակատագիրը չթողուց որ աշխատանքը ամբողջացնելով արգասիքը վայելէր:

(Շարունակելի)

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor


Մեծախառնակներու եւ մտնակներու Բարբառաբարքիք բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդադիւն եւ մկանային ցոււք:
Ինքնաշարժի վթարի եւ նոստանքով պատճառած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

**ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ԳՅՐԴ ՏԱՐԵԳԱՐՉԻ ԱՌԹԻ**

Կազմակերպութեամբ Փասատինայի Հայ Համագործակցից Մարմինի

Հինգշաբթի, Ապրիլ 24, 2014
Փասատինայի Բաղաբապետարանին Առջեւ
100 N. Garfield Ave., Pasadena, CA 91101 • Առաւելում ժամը 10:00-ից



**COMMUNITY COMMEMORATION
FOR THE 99TH ANIVERSARY
OF THE ARMENIAN GENOCIDE OF 1915**

Presented by Armenian Community Coalition of Pasadena

Thursday, April 24, 2014, at 10:00am
In front of Pasadena City Hall – 100 N. Garfield Ave., Pasadena, CA 91101


ՆԱ ԱՍՏՂԵՐ ԵՐ ՈՐՍՈՒՄ

ԶՕՐԻ ԲԱԼԱՅԱՆ

2014 թվականի Փետրուարի 21-ի լույս 22-ի գիշերը վախճանունեց Գրիգոր Գուրգադեանը: Վաղ առաւօտտեան, գտնուելով հանգուցեալի բնակարանում, ես որոշ ժամանակ մնացի մահճակալի մօտ, որի վրայ կանգ էր առել մեծ գիտնականի սիրտը: Եւ մտաբերեցի, թէ ինչպէս մի անգամ Գուրգադեանը մի տեսակ յուզախառը եւ բաւական երկար խօսեց հենց իր սրտի մասին: Ես շատ լաւ եմ յիշում այդ օրը: 1998 թվականի Դեկտեմբերի 18-ն էր: Չեմ պարծենում սուր յիշողութեամբ: Պարզապէս գիտեմ, որ այդ օրը մենք բոլորովին էլ ոչ չբեղորէին նշում էինք, ինչպէս մենք էինք ասում, «Օրիոնեան յոբելեանը» «արտամթնոլորտային «Օրիոն-2» աստղադիտարանով սարքաւորուած հրթիռի ղեկի տիեզերք արձակման քսանհինգամեակը: Գրիգոր Արամովիչն այդ օրն ասաց, թէ քառորդ դար առաջ իր սիրտն ուժգին տրոփում էր, այնքան ուժգին, որ թւում էր «դուրս է թռչելու կրծքից: Դա երջանիկ տրոփում էր: 1973 թվականի Դեկտեմբերի 18-ի վաղ առաւօտեան Բայկոնուր տիեզերակայանից աշխարհում առաջին անգամ Երկրի ուղեծիր դուրս բերուեց մի տիեզերանաւ, որը մտաւ համաշխարհային աստղագիտութեան եւ աստղաֆիզիկայի պատմութեան մէջ: Դա «Սոյուզ-13» տիեզերանաւն էր: Նաւի հրամանատարն էր Պյոտր Կլիմուկը, ինժեներ-օպերատորը՝ Վալենտին Լեբեդեւը: «Օրիոն-2»-ի գլխաւոր կոնստրուկտորը եւ տիեզերակայանի գիտափորձի գիտական ղեկավարն էր Գրիգոր Գուրգադեանը:

Քսանհինգ տարի անց ես իմացայ, թէ այդ ինչու էր ակադեմիկոս Գուրգադեանի սիրտը պատրաստ «դուրս թռչելու կրծքովանդակից»: «Օրիոն-2»-ի յաջող գործարկումից երկու տարի առաջ «Սոյուզ-11» տիեզերանաւում տեղադրուել էր գուրգադեանական «Օրիոն-1»-ը, որը երկարաժամկէտ գործողութեան տիեզերական աստղադիտարան էր: Յաւօք, այդ թուիչքը ողբերգական աւարտ ունեցաւ: Տիեզերանաւի անձնակազմը «տիեզերագնացներ Դոբրովոլուկին, Վոլկովը եւ Պացանը գոհուեցին վայրէջքի ժամանակ: Նշենք, որ օպերատորը եւ էլեկտրոնիկայի մասնագէտ Վիկտոր Պացանը, ինչպէս ինքն էր ասում, սրբազան երազանք ունէր տիեզերքից վերադառնալուց յետոյ տեղափոխուել Հայաստան, որտեղ մտադիր էր ապրել եւ աշխատել Գառնիում, աւելի ճիշտ Գառնիի աստղափորձական կենտրոնում:

Այնպէս որ, կարելի էր հասկանալ «Օրիոն-2»-ի հեղինակ Գուրգադեանի հոգու եւ սրտի վիճակը այն պահին, երբ տիեզերք էր արձակուում երկրորդ տիեզերանաւը, իր վրայ կրելով նրա մտքի արգասիքը: Եւ ահա մեծ աստղաֆիզիկոսի, ինժեներ-կոնստրուկտորի, բաւիս ուղղակի եւ փոխաբերական իմաստով իսկական արուեստագէտի այդ սիրտը կանգ առաւ նրա կեանքի 92-րդ տարում: Երկար ու յամառօրէն էր պայքարում Գրիգոր Արամովիչը ծանր, եթէ չասենք ահաւոր հիւանդութիւնների ղէմ: Նա կուրացաւ երկու անգամ: Հազիւ էր կարողանում



ձայներ ընկալել նոյնիսկ լսողական սարքի օգնութեամբ: Չէր լսում այն մարդը, որն իր ողջ կեանքում ծարաւի էր գրոյցների, վէճերի, բանավէճերի, երկխօսութիւնների «աստղերի մասին, Տիեզերքի մասին, Ղարաբաղի մասին, Հայաստանի պատմութեան եւ ապագայի մասին, քրիստոնէական բարոյականութեան մասին, պատերազմի եւ խաղաղութեան մասին, հայ ժողովրդի համար պառակտման վտանգաւորութեան մասին: Չէր տեսնում այն մարդը, ում Մարտի-եանը անուանում էին լույսի ու գոյնի երգիչ, նկատի ունենալով նրա վրձնած անկրկնելի արեւաշունչ կակաչները» կանաչ սարերի լանջերին:

Չորրորդ յարկի մեր բնակարանների դռների միջեւ տարածութիւնն ընդամէնը մէկուկէս մեթր էր: Յաճախ էինք բարձրաձայն երկխօսութիւնների բռնուում: Մեր հանդիպումների մասին ես շատ եմ գրել: Ես տեսնում էի, թէ ինչ անձնագոհութիւն է ցուցաբերում Գուրգադեանի կինը Մարիաննան, որին քոյր եմ անուանում: Երկուսիս հայրերն էլ ստալինեան բռնաճնշումների գոհեր էին: Նա օր ու գիշեր ինամում էր անօգնական ամուսնուն: Ի ղէպ, յաճախ էլ ուրախութեամբ ծաղրում էր մեր երկխօսութիւնները:

Դժուար էր տեսնել, թէ ինչպէս է դեռեւս ոչ շատ վաղուց արագաքայլ, անդադրում, անհանգիստ մարդը յանկարծ օրուայ քսանչորս ժամը անցկացնում անշարժութեան մէջ: Ահա թէ ինչ ասաց մի անգամ, չիմանալով, որ ես միշտ գրառումներ եմ կատարում. «Առաջ էս չէի սիրում երկաքնել, քանզի ինձ համար ժամանակից թանկ ոչինչ գոյութիւն չունի: Իսկ հիմա անընդհատ ուղում եմ քնել, որպէսզի երազում տեսնեմ տաք արեւն ու վառ աստղերը, կարմիր կակաչներն ու կապոյտ երկինքը»:

«Օրիոն-2»-ի յաղթարշաւից յետոյ Գուրգադեանն ու իր համախոհները ձեռք գարկեցին մի նոր նախագծի, նոր տիեզերական աստղադիտարանի, այն կոչելով «Քրոմոս»: Գուրգադեանի կարծիքով այդ ծրագիրը պէտք է հիմք ծառայեր ստեղծելու իւրօրինակ գիտութիւնների Հայկական ակադեմիա» Տիեզերքում: Գործընկերներից շատերը ժպիտով էին վերաբերում բուն գաղափարին: Դրանք իմ կողմից շատ յարգուած գիտնականներ էին, որոնց հետ, բնականաբար, ես ինձ թոյլ չտուեցի վէճի բռնուել: Քանզի ինձ համար, որպէս գրողի, չափանիշ էր բուն փաստը. Գրիգոր

Գուրգադեանն արդէն ապացուցել է, որ իր գաղափարը գործնականում իրականացուել է եւ փառք բերել Հայաստանին: Չորս աստղադիտակներից եւ սպեկտրոգրաֆներից բաղկացած «Քրոմոս»-ի բախտն այնպէս չբերեց, ինչպէս «Օրիոն-2»-ինը: Եւ ասեմ անկեղծաբար. խորապէս հոգուս դիպաւ ոչ թէ գործի տեխնիկական կողմը, որից քիչ եմ հասկանում, այլ Գուրգադեանի գրած բառերը, որպէս ինչ-որ քնարական, եթէ չասենք «հայրենասիրական շեղում. «Եթէ վաղը Արարատեան դաշտավայրում խփեն նաւթի բիւրաւոր շատրուաններ, կամ էլ Հայաստանը, ասենք, երկրորդ ճապոնիա դառնայ էլեկտրոնիկայի գծով, ապա բոլորովին էլ չենք գարմացնի աշխարհին: Բայց եթէ վաղը բոլոր երկրների բոլոր ուստիոկայանները այդ նոյն աշխարհին յայտնեն, թէ Երկրի ուղեծիր է դուրս բերուել հայկական արբանեակ «հայկական «Քրոմոս» աստղադիտարանով, ապա ողջ աշխարհը կը ցնցուի մեր Հայաստանով»:

Երազող: Ռոմանտիկ: Իսկ ինչ կալ որ: Մի՞թէ վատ բան է լինել թէ՛ երազող, թէ՛ ռոմանտիկ եւ, միաժամանակ, միջազգային հեղինակաւոր գիտաժողովի ամպիրոնից պաշտօնական յայտարարութիւն լսել, թէ «թոյլ աստղերի սպեկտրալ դասակարգման ապագայ են հանդիսանում միայն եւ միայն Գ. Գուրգադեանի «Օրիոն-2» մեթոդը եւ Տիեզերք հանուած աստղադիտակների եւ սպեկտրոգրաֆների օգնութեամբ այդ մեթոդի լայն կիրառումը»:

Այսօր, երբ արդէն կանգ է առել ականաւոր գիտնականի եւ փիլիսոփայի սիրտը (եւ հաւատում եմ, որ ինչ-որ ժամանակ մեր ժողովուրդը եւ ընդհանրապէս ողջ մարդկութիւնը նորից նախկին սիրով եւ նախկին պատկառանքով կը վերադառնայ գրքին, որի մէջ կը տեսնի աշխարհի փրկութիւնը եւ այնժամ կ'իմանայ, թէ փիլիսոփայական ինչպիսի աշխատութիւններ ունի Գուրգադեանը), ես ցանկանում եմ եւս մէկ անգամ մէջբերում կատարել մեր երկխօսութիւններից մէկից. «Ես Գուրգադեանին յիշեցրի, որ շուտով լրանալու է նրա ինստուն տարին: Նա խնդրեց Մարիաննային, որ թեթեւակի յարմարեցնի աջ ականջի անիծեալ, ցաւ պատճառող, լսողական սարքը: Ես կրկնեցի խօսքերս յոբելեանի մասին: Նա ոչինչ չասաց: Մտածեցի, թէ չի լսել եւ բաւական բարձր դիմեցի»:

- Ասում եմ, շուտով լրանալու է ինստուն տարիդ: Քո յոբելեանը: Նա գլուխը տարուբերեց, հասկացնել տալով, որ լսել է ինձ, եւ որ այդ յոբելեանը բոլորովին էլ չի կարող մեր խօսակցութեան թեմա լինել, եւ մի տեսակ մտահոգ ասաց. - Աւելի լաւ է «դու ինձ պատմես, թէ այսօր ինչ է կատարուում աշխարհում»:

Այստեղ Մարիաննան, նրան ընդհատելով, յայտնեց, թէ ամէնուր կուռում են, կրակում են, ումբակոծում են:

- Այսօր ումբակոծել են Բաղդադը, -աւելացրի ես:

Աստուած իմ, ինչ կատարուեց Գրիգորի հետ: Նա երկար լուեց: Յետ գցեց գլուխը, ասես ինչ-որ բան էր կարողում այնտեղ, առաս-

տաղի վրայ: Խոր ներշնչելով «Դանդաղ կուացաւ, ջրոտ արեւրով ծածկեց դէմքը եւ մատների արանքից բարձր արտաբերեց.

- Ես այնտեղ եմ ծնուել: Բաղդադում:

Այո, Գուրգադեանը ծնուել է այնտեղ, Բաղդադում: Հրաշքով փրկուած նրա ապագայ ծնողները, չլսուած ողբերգութիւն ապրելով պատմական հայկական Սեբաստիայում, անցել էին Տէր Զօրի մղձաւանջների միջով եւ օթեւան գտել իրաքում: Տասնամեակներ անց Գրիգոր Արամովիչի որդին «Վահագն Գուրգադեանը Բաղդադում այցելեց 1640 թվականին կառուցուած Սուրբ Տիրամօր հայկական եկեղեցին, որի արխիւներում գտաւ եզակի փաստաթղթեր, որոնց մէջ էր նաեւ Գուրգադեանների ընտանիքում 1922 թվականի Հոկտեմբերի 18-ին Գրիգոր անունով կնքուած երեխայի ծննդեան գրառումը: Երկու տարի անց այդ ընտանիքը Հայաստան փախաւ (հենց փախաւ, այն էլ «նաեւ Արաքսի վրայով»):

- Իսկ ո՞րն է քո ամենասիրելի կէտը ողջ Տիեզերքում, -հարցրեցի ես:

- Գառնին, -արագ նետեց նա, ասես պատրաստ էր այդ, թւում է թէ, տարօրինակ հարցին:

- Ողջ Տիեզերքում միայն Գառնի՞ն, -հարցրեցի ես:

- Ըստ հուլիանի, «Օրիոն-1»-ը եւ «Օրիոն-2»-ը մեկնարկել են ոչ թէ Բայկոնուր տիեզերակայանից, այլ «պատմական Գառնիից»: Տիեզերք թռան իմ...որսորդները:

- Ինչո՞ւ որսորդները:

- Նրա համար, որ Օրիոնը որսորդ-հսկայ էր, եւ աստուածների հայր Զեւսը նրան վերածեց ամենագեղեցիկ հասարակածային համաստեղութեան «առաջին մեծութեան երկու վառ աստղերով եւ երկրորդ մեծութեան եւս երեք աստղերով»: Դէ, իսկ մեր «Օրիոնները», Գառնիից թռչելով Տիեզերք, վերադարձան Երկիր եւ Գառնի բերեցին աստղային հարուստ որս:

Ահա թէ ինչ է գրել այդ մասին մեծ աստղագէտ, տեսական աստղաֆիզիկայի հիմնադիրներից մէկը՝ Վիկտոր Համագասպի Համբարձումեանը. «Գիտափորձի ղեկավարը եւ «Օրիոն-2»-ի բոլոր հիմնական սարքերի գլխաւոր կոնստրուկտորն է Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի թղթակից-անդամ Գրիգոր Գուրգադեանը: Նա նոյնպիսի յամառութեամբ Գառնիում իրագործեց տիեզերքից ստացուած լուսանկարների մշակումը: «Օրիոն-2»-ը տուեց ոչ միայն չափազանց հետաքրքրական արդիւնքներ գիտութեան եւ գիտական սարքաշինութեան համար, այլեւ մեր առջեւ դրեց բոլորովին նոր խնդիրներ, որոնց լուծման համար պահանջուում են նոր «Օրիոններ»»:

Ես այս տեքստը նրա համար բարձր ընթերցեցի Մարիաննայի ներկայութեամբ: Գրիգոր Արամովիչը, ցաւից կնճռոտուելով, ականջից դուրս քաշեց լսողական սարքի ծայրը եւ ասաց. «Այդ ամէնը ճիշտ է: Սակայն ես մենակ չէի: Ինձ հետ էին եւ՝ Կոռոյիովը, եւ՝ տիեզերագնացները, եւ՝ հայ գիտնականները, եւ՝ հայկական գիտութիւնը եւ, իհարկէ, ողջ Հայաստանը»:

Երկնային արքայութիւն քեզ, թանկագին որսորդ աստեղաց...

ԴՈԿՏ. ԵՐՈՒԱՆԴ ՔԱՍՈՒՆԻ ԼՈՐ ԳԻՐՔԸ

ՊԵՏՐՈՍ ԱԼԱՋԱՅՏՈՅԱՆ

«(...) Հայրս՝ իր պատանի հասակին Մեծ Եղեռնի սեւաթուղթ օրերու բովանդատման անցած մարդ, ամէն առաւօտ, մութնուլուսին, մեր մէկ սենեկանոց բնակարանի միակ պատուհանին տակ, իր անկիւնը քաշուած, Աղօթագիրքը ընթերցելէ ետք, (...), իր հեշտալուր ձայնով պիտի սկսէր երգել: Երեք երգերու հերթականութիւնը բնաւ չէր փոխուեր, նախ «Առաւօտ Լուսոյ»ն էր, յետոյ՝ «Մայր Արաքսի փերով»ը եւ հուսկ՝ «Երբ որ բացուին դռներն յուսոյ»ն, միշտ իւրաքանչիւրէն քանի մը քառատող»:

Այսպիսի հեզահամբոյց տողերով սկսած՝ դոկտ. Երուանդ Քասունիի 2013ին Պէյրութ լոյս տեսած ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԵՐԳԵՐՈՒ ԵՒ ԵՐԳԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ գիրքին նոյն Յառաջաբանին մէջ կը շարունակենք կարգաւ. «Ու երգը մնաց ինծի հետ (...) հօրենական տունէս հայ երգի յուշերը վերականգնանք սեփական տանս մէջ: Հոս ամէնօրեայ ներկայութիւն են կոմիտասի եւ Եկեղեցիի պատարագները, Մայր Եկեղեցիի Շարականները, հայ ազգային մշակոյթի ակունքներէն անած-հասած (...) երգերը: Այս բացայայտումը անոր համար որ սահող տարիներուն հետ որքան սերտացաւ մտերմութիւնս Հայ Երգին հետ, այնքան անհասկնալի մնաց «Հոգեւոր Երգեր» երգարաններու օտարածին երգերու պարտադրանքը»:

Պէյրութէն մեզի ծանօթ՝ «Է. Է. Էլմաճեան» երգարանը «Հայաստանեայց» Աւետարանական Եկեղեցիին «Հոգեւոր Երգերու» շտեմարանն էր ուր, առանց ունէ սկզբունքի դիտում երգերը, բոլորն ալ հանդերձ ձայնագրեալ եղանակներու, կը ծառայէին տաճարէն ներս հաւատացեալ ներկաներուն երգեցողութեան իբրեւ առաջնորդ: Այս նոյն Յառաջաբանէն կ'իմանանք որ այդ երգարաններուն ամենէն հինը մօտ 130 տարուայ հնութիւն ունի: Սակայն, ինչպէս կը նշէ հեղինակը, անոնք մասնաւոր գուրգուրանքի առարկայ դարձած չեն, ինչպէս էին օրինակ հայ ժողովրդական-ազգային երգերու նուիրուած երգարանները: Անոնք, իրենց անհայրենիք, օտարամուտ, թարգմանածոյ նկարագիրին պատճառով, փոխափոջ հաւաքուած, ասոր-անոր ճաշակին համեմատ ներառուած երգեր են, «առանց Հայ Աւետարանական Եկեղեցիներու հանգանակները նկատի առած», կը գրէ հեղինակը «Ներածութիւն»ին մէջ: Այս անսկզբունքային պարունակութեան իբրեւ հետեւանք անոնք են թարգմանած են յարատեւ փոփոխութեան՝ տարուէ տարի, քաղաքէ քաղաք, պահանջէ պահանջ, երգարանէ երգարան կամ ճաշակէ ճաշակ:

Այս երգարաններուն փոխափոջ նկարագիրը ընդգծելու համար բերեմ հետեւեալ օրինակը: Հայրս շատ կը սիրէր հոգեւոր երգ մը՝ «Խաղաղ էր ծովն Գալիլիայի, Երբ նաւ մ'անոր վրան»։ Պէյրութ, կիրակիէ կիրակի, գայն մը թմբալուծով հայրս կու գար եկեղեցի (ժողովարան) ձեռքէս բռնած: Երկար տարիներ ետք, երբ պայմաններու բերմամբ Պէյլճիքան ձգեցի եւ Կլենտէյլ հաստատուեցայ, ուզեցի մօտէն ծանօթանալ այդ «հօրենական» երգին: Հոգեւոր երգերու

երգարանին մէջ փնտռեցի ընդերկար, այս երգը որ չկար, նաեւ չկար Բասառեանի ժողովարանի երգարանին մէջ: Ի վերջոյ գայն գտայ տիկնոջս հօրը պատկանած 1912ին Կոստանդնուպոլիս լոյս տեսած 400-է աւելի երգերով ծանրացած երգարանին մէջ: Հինգ երգատուներէ բաղկացած այս հանդարտաբարոյ եղանակին հեղինակը ո՞վ է, չէ նշուած, իսկ ոտանաւորին տակ կը կարդանք «Թարգ. Elias Riggs» (հաւանաբար հայերէն գրտոցող ամերիկացի միսիոնար մը, որ Պոլիս գործած է. ուրիշ տեղ ալ յիշուած է այս անունը):

Դոկտ. Երուանդ Քասունիին այս 216 էջնոց ինամուած գիրքը կը բաղկանայ չորս գլխաւոր բաժիններէ. անոնք աչքէ կ'անցնեն (նկարներով) այդ մօտ 130 տարիներէ ի վեր լոյս տեսած իրարայաջորդ հարեւրաւոր երգարաններուն կարեւորագոյնները՝ Պոլիս, Պէյրութ, Երեւան, Փարիզ, Գահիրէ, Հիւս. եւ Հարաւ. Ամերիկաներու մէջ լոյս տեսած: Հատորին կարեւորագոյն մասը սակայն կը կայանայ, ըստ իս, իր տան էջնոց «Ներածութիւն»ին մէջ: Հոս հեղինակը անվերջ հարցադրումներով կը փափաքի գիտնալ ինչո՞ւ «Հոգեւոր Երգեր» անունով ծանօթ Բողոքական Աւետարանական հայ եկեղեցիներու բոլոր երգարաններու երգերուն աւելի քան 95 տոկոսը օտար, ի մասնաւորի անգլերէնէ թարգմանուած երգեր են, ներառնուած նմանապէս իրենց օտարաբոյր եղանակներով: Հայ հեղինակի պակաս կար, թէ հայ երգ հնարողի կարօտը կար: Այս պաշտօնային (այս երգերուն «պաշտօնն» է հոն մէկտեղուած հաւատացեալները միասին եւ միաձայն երգելու մղել, ինչպէս օրակարգը եղած էր Մարդին Լութերի ստեղծած առաջին Բողոքական եկեղեցոյ մէջ) համաբարեցողութիւնը աւանդութեան նման բան մը եղած է եւ բնա՛ւ պարտաւորութիւն չէ գոյացած օտար քոյր յարանուանութիւններուն հանդէպ, մասնաւորաբար գեղագիտական կամ ոգեշնչական իւրայատուկ սկզբունքներ ալ չեն եղած. ուրեմն ինչո՞ւ այս անօրինակ հաւատարմութիւնը ոչ հայաշունչ այս երգերուն հանդէպ: Արդար ըլլալու համար հարկ է աւելցնել, որ այդ 1912 թ.-ի երգարանին թիւ 418-424 եօթ երգերը իրենց գրաբար տեսքով գտարիւն Շարականներն են: Թէ ինչ համեմատութեան մը այդ Շարականներու երգեցողութիւնը կը գոյակցէր անկլօ-ամերիկեան հայացուած երգերուն կողքին, կը տարբերուէր պատուելի պատուելի, եկեղեցիէ եկեղեցի կամ կիրակիէ կիրակի:

1899ին նորէն Պոլիս հրատարակուած հայատառ թրքերէնով երգարանին բոլոր երգերը թրքերէն են, իսկ 1969ին Պէյրութ վերահրատարակուած «Է. Է. Էլմաճեան, Հոգեւոր Երգեր Պաշտամունքի» ձայնագրեալ 872 երգերու հաւաքածոն վերջ կը գտնէ վեհաշուք 25 Շարականներով: Ասոնց առաջինը միշտ եղած է «Առաւօտ Լուսոյ»ն. հոս, անոնց վերջինը կը հանդիսանայ շատ սիրուած Վարդանանցի «Նորահրաշ պսակաւոր»ը: Պէտք է տեսնել ինչ խորթակով կ'երգեն հայրենաշունչ այս երգը եւ ինչ հպարտ հիացումով խորանէն կը հնչեն «Վասն Քրիստոսի, վասն Հայրենեաց» քարոզները:

Նկատի ունենալով հոգեւոր երգերուն բազմահարիւրի հասնող քանակը եւ այդ երգերուն անընդհատ ել ու մուտը երգարաններու դռներէն, ինչ որ կը խախտէ երգարանի դիմագիծը եւ բովանդակութեան հանդէպ վստահութիւնը, հեղինակը կը հարցնէ՝ «Կարելի՞ է ճշդել թէ այդ ո՞ր հոգեւոր երգն է կամ երգերը, որոնք միշտ պահուած են իրերայաջորդ բոլոր երգարաններուն մէջ: Պատասխանը ձգուած է առկախ: Ըստ իս պատասխան մը հետեւեալն է: Հաւանաբար բոլոր վերիվայրումներուն, այս բոլոր երգարաններն ալ, 1912ին ի վեր մինչեւ օրս, եթէ ոչ բոլորը, գոնէ 95 տոկոսը անոնց, ունին առնուազն մէկ շարունակական երգային օրինակ մը անոնք բոլորն ալ կը սկսին երկու իրաւամբ Հոգեւոր երգերով՝ կարճ եւ երկար եղանակներով բոլորէն սիրուած Փառաբանութեան նոյն խօսքերով վրայ հիւսուած հետեւեալ երգերով՝ Փառք եւ Պատիւ եւ Զօրութիւն՝ Հօրն եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն:

Միասնական Երրորդութեան՝ Փառք ի բարձունս Յաւիտեան. Փառք:

Երկար եղանակովը ունի քիչ մը աւելի արագ ընթացող վերջաբան մը՝

Ալէլուիա, Ալէլուիա, Ալէլուիա, Ամէն (...):

Եւ, ինչպէս միշտ, առանց խօսքերուն հեղինակին անուն-մականունը չիշուած ըլլալու:

Ուրախ եմ յայտարարելու, որ այս վեհապանծ Փառաբանութեան երգերը, իրենց ոճաբանական կառուցով եւ կշռոյթով, կը յիշեցնեն մեզի ծանօթ կոմիտասեան «Ազգային Օրհներգ»ը,

Ամէն Հայի Սըրտից Բըխած՝ Լըսիր Այս Զայնն, ՌՎ Աստուած (...)

Կնոջս հօրը գրադարանին մէջ կը գտնուի գաճաճ, փխէս աւելի փոքր բայց հաստափորիկ հատոր մը, որուն ցաւ ի սիրտ կը պակսին խորագրային եւ ուրիշ էջեր, բացակայ է նաեւ տպ. թուականը. տեղ մը նշուած է այս երգարանին հայատառ թրքերէն անունը: Ժողարո՞ւն թէ ի. դարու արտադրութիւն է: Քասունիին գիրքին մէջ նոյն հայատառ թրքերէն խորագիրը կրող, նոյնպէս ոչ ձայնագրեալ երգարանի մը յիշատակութիւնը կայ (էջ 59) բայց իմ գտածս չէ: Այս հաստափոր հատորիկը ունի յստակ երեք իրարմէ անկախ բաժիններ: Առիւծի բաժինը գրաւած են ի հարկէ թրքերէն հոգեւոր երգերը՝ 360 էջ, 372 երգ. ապա կը կարդանք «Ընտրուած Հոգեւոր Երգեր - Հայերէն Մաս», մինչեւ էջ 528, որմէ ետք կը սկսի Գ մասը՝ Շարականներ: Հակառակ անգիր օրէնքի մը ներկայութեան, որուն համաձայն շարականներուն առաջինը «Առաւօտ Լուսոյ»ն կ'ըլլայ, այստեղ այդ աւանդութիւնը խախտած է. հոս առաջին Շարականը «Զարթիք»ն է (Զարթիք եւ մի ննջէք, նման յիմար կուսից...)։ Այս գրաբար ոչ թարգմանածոյ եւ ոչ ձայնագրեալ Շարականները կ'երկարին թիւ 549էն մինչեւ 585: Հարցումներէն մէկն ալ սա է՝

ինչպէ՞ս որոշուած է այդ երգերուն ընդունելի ըլլալը, քանզի, կ'ըսէ հեղինակը «համընդհանուր Հայ Աւետարանական ոչ մէկ չափանիշ գոյութիւն ունի նման աշխատանք մը առաջնորդելու»։ Հարեւրաւոր թարգմանական երգերու մուտքն ու ելքը այդ ցոյց կու տայ: Ահա թէ ինչ կը գրէ հեղինակը այս մասին. «Աստուծաշունչը թարգմանուեցաւ աշխարհաբարի գայն ժողովուրդին մատչելի դարձնելու նպատակաւ (...) իսկ այս «Հոգեւոր» երգերը: Անոնք ոչ մէկ արդարացում ունէին այդպիսի մեծ թիւով խուժելու Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիէն ներս: (...) Կը նշանակէ ասպարէզը գուրկ էր խիստ հակողութեան»։ Ի վերջոյ հարցը կը լանգի՝ պատրաստը ներածելու հեշտանքին եւ սեփականը ստեղծելու դժուարութեան կամ դժկամակութեան: Համեստ ազգային բերքը նախամեծար չէ՞ր ... թերեւս արհեստավարժ մակարդակ գտնելը տաժանակիր աշխատանք կը պահանջէր: Եւ ահա կը յայտնուի հիմնական հարցը. վերագառնալ արմատական հարազատութեան. ստեղծել Հայ Աւետարանական պաշտամունքի երգը: Ան, «քրիստոնէական հաւատքի աներկբայ արտայայտութիւնը ըլլալուն գուրգահեռ, պիտի ըլլայ նաեւ ազգային աւիշ կենսագործող ազգակ, կերպարանաւորելով ե՛ւ քրիստոնեան ե՛ւ հայը հայ մարդուն մէջ» (էջ 16): Ու այս «Ներածութիւն»ին խորհրդահաստատ եզրակացութիւնը կը հետեւի Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիի պաշտամունքի երգերու մէկ ու միակ երգարանի մը պատրաստութեան անհրաժեշտութիւնը, որ Հայունն ըլլայ եւ միայն Հայաստանեայց՝ իր բովանդակութեամբ եւ հուլթեամբ: Երգարան՝ ուր իր նախապատիւ տեղը ունենայ Շարականը: Այս եզրայնագումին բացարձակ ճշմարտութեան սիրոյն կ'արժէր այսպիսի գիրքի մը ձեռնարկը: Այսպիսի երգարան մը նաեւ պիտի սատարէր հայերէնի՝ արեւմտահայերէնի տարածման եւ զսպանակ մը դրած պիտի ըլլար մեր սանձարձակ եւ ստրկամիտ օտարամոլութեան:

Երուանդ Քասունի ծնած է Հայէպ: Պէյրութի Սէն Ժոզէֆ համալսարանէն կը ստանայ Արեւելագիտական Ուսմանց վկայականը: 1974ին կը վկայուի Երեւանի Պետական Համալսարանի Հայ Ժողովուրդի Պատմութեան Ամպիոնէն Դոկտոր Փիլիսոփայութեան Պատմական Գիտութիւններու, աւարտած ներկայացնելով «Կիլիկիոյ Հայկական Իշխանապետութիւնը Մերձաւոր Արեւելքի Քաղաքական Հոլովոյթին մէջ» պատմագիտական աշխատանքը: Պաշտօնավարած է Պէյրութի եւ շրջաններու հայկական բազմաթիւ դպրոցներէ ներս: Փրոֆ. Դոկտ. Երուանդ Քասունի հեղինակ է տասնեակ մը հատորներու, ի մասնաւորի 2012ին Պէյրութ լոյս տեսած՝ «Քննական Ակնարկ՝ Միշտնեւի Հերբըտի 1915-1918 թթ. Հայ Ժողովուրդի Ցեղասպանութեան եւ Վկայագրութիւններուն»:
Հասցէ՝ yhkassouny@hotmail.com

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՏՂԱՍԱՐԴՈՑ ՆԱԽԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԿԻՆ ԸՆՏՐԵԼՈՒ ԶԱՍԱՐ

Ըստ կատարուած հետազոտութիւններու՝ տղամարդիկ կը գերադասեն փխրուն, նիհար, միջին հասակի կիներ: Ինչո՞ւ է այդպէս: Զէ՞ որ լրատուական միջոցները կը գովազդեն բարձրահասակ, գեղեցիկ ու սլացիկ կառուցուածքով կիները՝ որպէս գեղեցկութեան խորհրդանիշ: Եւ յետոյ հակայ կիներ աւելի մեծ հնարաւորութիւն ունին առողջ սերունդ ունենալու: Այս հարցին շուրջ կայ մի քանի տեսակէտ.

Տղամարդ-իշխող՝ ան վարժ է ամէնուր ըլլալ գլխաւոր, գերակայ, ենթարկել եւ, բնականաբար, ըլլալ ընտանիքի առաջնորդը: Փոքրիկ կազմուածքով կիներ կ'ընկալէ որպէս լսող եւ ենթարկուող: Ան երբեք չի կրնար դեկավարման ծանր գործը իր փխրուն ուսերուն վերցնել, որոշիչ խօսքը միշտ կ'ըլլայ տան տղամարդունը:

Տղամարդ-պաշտպան՝ ոչ բարձրահասակ կիներ տղամարդուն մէջ կը յառաջացնեն պաշտպանի բնազդը: Անոնք կը ձգտին պաշտպանել եւ աստարել իրենց հիասքանչ կիներուն:

Այդ պատճառով ուժեղ սեռի ներկայացուցիչները կը սիրեն ամուսնանալ նման կառուցուածքով կիներու հետ:

Սակայն, անպաշտպան թուացող այդպիսի կիներ ուժեղ բնաւորութիւն ունին: Ամենայնդէպ ուժեղ սեռը փխրուն կիները կը համարէ ամենացանկալի եւ քնարական (ուռմանթիք):

Անգիտակցական մակարդակին մէջ անոնք մղում կը զգան այդ կիներուն հանդէպ: Այդ պատճառով արդէն դեռահաս տարիքէն երիտասարդ տղաներ կը կարծեն թէ կրնան փխրուն, փոքրամարմին կիներու հետ վարուիլ իրենց ուզած ձեւով:

Բացի այդ գիտնականները կը պնդեն, որ ոչ բարձրահասակ կիներ իրենց տարեկիցներէն աւելի շուտ կը հասունանան, երբ բարձրահասակներու մօտ ուժը կը ծախսուի հասակին վրայ:

ԳԵՏՆԱԽՆՁՈՐԻ ԶԻՓՍԵՐՈՒ ՎՏԱՆԳԸ

Գետնախնձորի չիփսերու օգտագործումը կրնայ անդառնալի փոփոխութիւններ յառաջացնել երեխայի ուղեղին մէջ: Այդպիսի եզրակացութեան հասած են Պրիսթլիի համալսարանի գիտնականները:

Հետազոտման նիւթ դարձած է 3-4 տարեկան երեխաներու ուղեղը: Անոնց անդակաւորներին չիփս եղած է ամէն օր: Գիտնականները վերլուծած են անոնց առողջական վիճակը եւ պարզած, որ անոնք նախկինին պէս նախաձեռնող չեն, զգալիօրէն նուազած է յիշողութեան որակը:

Պատճառը չիփսերուն մէջ եղող ճարպերն են, որոնք կը խանգարեն մանկական ուղեղին ճիշդ գործունէութիւնը: Ուղեղին համար հիմնական վտանգը աքրիլամիտին մէջ է: Ան գոյութիւն ունի բոլոր չիփսերու բաղադրութեան մէջ, ոչ միայն մութածին է, այլեւ քաղցկեղածին, կը հաղորդէ «եւրոսմի»-ն: Գիտնականները նաեւ խորհուրդ կու տան չիփս չտալ յղի կիներուն:

ԻՆՉՈՒ ԿԸ ԿՆՃՈՒՑԻՆ ՄԱՐԴՈՒՆ ՄԱՏՆԵՐԸ ՁՈՒՐԻ ԶԵՏ ՇՓՈՒՄԵՆ

Չուրի հետ շփումէն մարդուն մատները կը կնճռոտին ոչ պատահականօրէն, այդ ունակութիւնը յառաջացած է եղափոխութեան ընթացքին՝ որպէսզի աւելի դիւրին ըլլայ թաց եւ սահուն առարկաները բռնել: Այսպիսի եզրակացութեան հասած են Անգլիոյ Նիւքասլիի համալսարանի գիտնականները: Կենսաբաններու խումբը մը ցոյց տուած է, որ կնճռոտած մատներով մարդիկ աւելի լաւ կը կառավարեն թաց առարկաները, երբ չոր առարկաներու պարագային այդ ունակութիւնը չի գործեր: Շատ մարդիկ կը գտնեն, որ Չուրի շփումէն մատներու վրայ կնճիւղներու յայտնուիլը կապուած է մաշկի վերին շերտերու խոնաւացման հետ, որոնք կ'ուռնին խոնաւութիւն ծծելով: Սակայն գիտնականներուն յայտնի է, որ կնճռոտիլը տեղի չի ունենար մատներու որոշ ջրիղերու վնասուելու պարագային: Ան պայմանաւորուած է արիւնատար երակներու նեղացմամբ, որ կը ղեկավարուի մարդու մատներու որոշ ջրիղին կողմէ: Աղբիւրը՝ Nature News:

ԳԵՐ ՄԱՐԴԻԿ ԶԱՃԱՆ ԿԸ ՏԱՌԱՊԻՆ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՅՈՒՋՈՒՄՆԵՐՈՒ ՎԵՐԱԶՍԿՈՂՈՒԹԵԱՆ ԶԵՏ ԿԱՊՈՒԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԷ

Աւելի կշիռքի գոյութիւնը կապուած է հիբոքամբ արտացոլող մոլեքիւլներու նուազ քանակին հետ: Իսկ ուղեղի այդ հատուածը կը պատասխանէ յիշողութիւններու ձեւաւորման ու պահպանման, կը հաղորդէ Meddaily-ն՝ վկայակոչելով Zee News-ը:

Մասնագէտները արտացոլած են N-ասեթիլլասբարթաթի մոլեքիւլը: Անով հնարաւոր է դատել ուղեղի բջիջներու վիճակին մասին: Որքան քիչ է մոլեքիւլին պարունակութիւնը, այնքան վատ: Գիտնականներու խօսքով՝ աւելի կշիռքը կրնայ յանգեցնել վատ յիշողութեան, մարդը չի կրնար վերահսկել յոգեբը, հնարաւոր է նաեւ ախորժակը: Հիբոքամբի ու ախորժակի կապը դեռ լման ուսումնասիրուած չէ:

Նկարագրուած գիտական աշխատանքը ինքնատիպ է, քանի որ առաջին անգամ կը բացայայտուի N-ասեթիլլասբարթաթի պարունակութեան եւ մարդու կշիռքին միջեւ կապը: Ի հարկէ, մասնագէտները պատրաստ չեն ըսելու, կրնա՞յ արդեօք մոլեքիւլի ցած մակարդակը աւելի կշիռքի մասին վկայել, թէ այդ կշիռքի աւելնալու պատճառն է: Թէեւ այստեղ կրնան գործել երկու այս գործօնները:

ՄԱՐԴՈՒ ԶԱՅՆԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Սա հետաքրքրական է...
Ձայնը մարդու բերնէն դուրս կ'ելլէ 1200 քմ/ժ արագութեամբ (340 մեթր/վայրկեան): Արագ խօսելու պարագային մարդը կ'արտասանէ մօտաւորապէս 300 բառ վայրկեան: Տղամարդու ձայնի տարածման շառավիղը կը կազմէ 180 մեթր:

Սա, ի հարկէ, փոքր ցուցանիշ է՝ համեմատած ամենաարագ միջատին արձակած ձայնին հետ, որը կարելի է լսել նոյնիսկ 400 մեթր հեռաւորութենէն: Սակայն տղամարդու ձայնի տարածման մրցանիշը (զիշերով, իտէպլական աքուս թիքայի պայմաններու մէջ) արձանագրուած է 17 քմ:

Շշուկի պարագային մարդու ձայնալարերը չեն աշխատիր, շշուկը կ'արտասանուի արտաշնչող օդի եւ բերանի շարժումներով:

Ընդհանրապէս մարդը կը խօսի միայն արտաշնչելու ատեն: Միայն հազուադէպ պարագաներու մէջ մարդիկ կը խօսին ներշնչելու ատեն, այն ալ կարճ բառերով «այո», «ոչ» եւ այլն:

Երբ մարդը կը խօսի օդ ներշնչելու ատեն, անոր ձայնը անձանաչելիօրէն կը փոխուի:

Սովորական մարդը ձայնը անփոփոխ կրնայ պահել միջին հաշուով 20-25 երկվայրկեան, իսկ մրցանիշը հաւասար է 55 երկվայրկեանի:

Երգչային ձայները ըստ ուժգնութեան կը դասակարգուին հետեւեալ ձեւով. սովորական ձայն - 80 տեսիպել, համերգային ձայն - 90 տեսիպել, օփերեթայի ձայն - 100 տեսիպել, ձայնը զաւեշտական օփերայի մէջ-110 տեսիպել, օփերային ձայն - 120 տեսիպել, համաշխարհային ձայնաշուք ունեցող օփերային ձայն - 120 տեսիպելէն բարձր:

Համեմատութեան համար նշենք, որ գերձայնային քոնքորտ ճանբորդատար ինքնաթիռը մեկնարկի ժամանակ վազբուղիէն բարձրանալու պահուն կ'արձակէ 130 տեսիպել աղմուկ:

ԶԻՆԳ ՊԱՐՁ ԵՒ ԶԱՍԱՐԱԿ ՄԵԹՈՏՆԵՐ ԼԱՒ ՔՈՒՆ ԵՒ ՕՐՈՒԲԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԲԱՐՁՐ ՏՂԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ ԱՊԱՐՈՎԵԼՈՒ ԶԱՍԱՐ

Հինգ պարզ եւ հասարակ մեթոտներ լաւ քուն եւ տրամադրութիւն ապահովելու համար.

1. Ընթրեցէք քնանալէն ամենաուշը 2-3 ժամ առաջ: Այլապէս անուշը չի մարտուիր եւ օրկանիզմը քնացած ժամանակ չի հանգստանար:
2. Մինչեւ քնանալը փորձեցէք մանրակրկիտօրէն ծրագրաւորել վաղուան օրը: Քնացած ժամանակ ենթագիտակցութիւնը կ'աշխատի այդ ծրագրին վրայ եւ առաւօտեան դուք կ'արթննաք վստահ ձեր նոր օրուան վրայ:
3. Աշխատեցէք քնանալ մինչեւ ժամը 10-ը: Մի քնանաք 8 ժամէն աւելի: Կ'ըսեն թէ հանրաճանաչ եւ մեծ մարդոց մեծ մասը կ'արթննայ առաւօտեան ժամը 5-ի ատեն:
4. Առաւօտեան երթալով բաղնիք, նայեցէք հայելիին մէջ եւ 3 անգամ ըսէք. «Ես քեզ կը սիրեմ»: Այս առաջադրանքը կրնան կատարել միայն ուժեղ մարդիկ: Կը բարձրանայ ինքնագնահատականը եւ տրամադրութիւնը:
5. Ասկէ ետք լոգցէք, առողջ սնունդ ստացէք եւ բարձր տրամադրութիւնը ամբողջ օրուան ընթացքին ապահովուած է:

VA Print Media


Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com




MassisPost G








BREAKING NEWS

MASSISPOST

THE FIRST ARMENIAN NEWS APPLICATION
PUBLISHED AND READY FOR DOWNLOAD ON ALL
THREE APP STORES

For all current MassisPost app users, please redownload the new app. The older version will not be updated nor supported.

ՊԱՏԵՐԱԶՍ ԵՒ ... ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏԵՐԱԶՍ

Շարունակում էք 6-էն

շատ արիւնարբուններու ճակատագիրը...:

Բ

Մեր նպատակն է Առաջին Աշխարհամարտի հարիւրամեակին ընդառաջ, ընթերցողին ներկայացնել 1914-1918 թուականներու համաշխարհային առաջին պատերազմի, անոր նախորդող եւ անշուշտ յաջորդող շրջաններու դէպքերն ու իրադարձութիւնները:

Խոստացանք մինչեւ Առաջին Աշխարհամարտի հարիւրամեակին ամբողջացումը "Արարատ" օրաթերթի էջերէն պարբերաբար անդրադառնալ սոսկալի Յեղասպանութեան թէ՛ բարբարոս ու բուժ գործադրողին եւ թէ՛ սոսկալի ու հայակուլ հրդեհին կրակը անընդհատ բորբոքողներուն:

Անխտիր բոլորին՝ մեծէն պատիկ...

Պատմական այդ շրջանի իրադարձութիւնները խիստ ցաւալի ողբերգականութեամբ իրենց արձագանգը գտան Հայաստան Աշխարհի տարածքին եւ ճակատագրական դարձան հայ ժողովուրդի նոր պատմութեան ամբողջ ընթացքին համար: Այնքան ճակատագրական, որ մեր հազարամեակներու պատմութիւնը մոլազարի սառնասրտութեամբ եւ ճիւղալիին հետեւողականութեամբ երկու մասի բաժնեցին:

Յեղասպանութենէն առաջ եւ Յեղասպանութենէն ետք:

Այնքան ճակատագրական, որ հարիւր տարի ետք ալ ցաւը կը շարունակէ կոտորուիլ, իսկ վէրքը չի սպիւնար: Հակառակը՝ հարիւր եւ աւելի տարիներու վաղեմութիւն ունեցող նորանոր փաստեր երեւան կու գան, որոնք անընդմէջ կը բորբոքեն չմարող կրակը, եւ անպատասխան մնացած հազարաւոր հարցեր մէկտեղուելով ընդամէնը մէկ հարցի կը վերածուին՝ "Ինչու"..." Մնացած բոլոր հարցերը, որոնց պատասխանները նոյնպէս չկան՝ այդ հսկայական "ինչու"-ին պարզագոյն են թահարցերն են:

Իրաւագիտութեան եւ քրէագիտութեան մէջ պարզագոյն օրէնք մը կայ, որ ապագայ իրաւաբաններուն առաջին իսկ օրէն կը սորվեցնեն. որ եւէ յանցագործութիւն բացայայտելու համար նախ պէտք է պարզել, թէ պատահարը առաւելաբար որո՞ւ ձեռնտու էր եւ ո՞վ, ի՞նչ շահ ունէր ստուալ յանցագործութեան մէջ: Շատ աւելի նողկալի եւ բոլոր երկիրներու (տրամաբանութենէն դուրս է, բայց նաեւ թուրք-իոյ) քրէական օրէնսգիրքերու մէջ պատիժը առաւել դաժան, սակայն արդարացի է, երբ յանցագործութեան, ուղղակի կամ անուղղակի, մէկի տեղ մէկ քանի հոգի մաս կը կազմեն: Տուեալ օրէնսգիրքը ո՛չ մէկ մեղմացուցիչ հանգամանք կ'ընդունի եւ քրէական օրէնսգիրքի համապատասխան յօդուածով առաւելագոյն պատիժը կը սահմանուի, երբ յանցագործութիւնը նախօրօք ծրագրուած-կազմակերպուած է:

Պատմութիւններու, առաւել եւս գերտէրութիւններու յանցագործութիւններու պարագային, (որոնք չեն գիտեր ինչու ինքնակոչ համաշխարհային դատաւորի դերը ստանձնած են) այս հարցապնդումները, ուրեմն նաեւ պատասխանատուութիւնները, միլիոն անգամ աւելի կենսական են:

Դժուար է, սակայն, համարժէք պատիժ գտնել, երբ կատարուածը ոչ յանցագործութիւն, ոչ ալ զանգուածային կոտորած է, այլ... Յեղասպանութիւն... սառնասրտորէն ծրագրուած եւ կազմակերպուած ցեղասպանութիւն: Իր բնօրրանին մէջ ապրող եւ արարող տոհմիկ ժողովուրդի մը իսպառ բնաջնջումի ծրագիր, որ չի բախտնացաւ ոչ թէ այն պատճառով, որ ծրագրի "հեղինակները" "թերացած" էին, այլ այն պատճառով, որ պետական այլասերութեան անդունդի եզրին գտնուող ազգ ու պետութիւններուն գործը մարդկութեան պատմութեան ջահակիրներէն մէկուն հետ էր...

Դաժան, անողոք եւ որ ամէնէն կարեւորն է՝ անխուսափելի է պատմութեան դատաստանը:

Դատաստանի անխուսափելիութեան վերաբերեալ կասկած ունեցողները պարզապէս լաւ ծանօթ չեն համաշխարհային պատմութեան՝ առաջին մարդասպան կայէնէն մինչեւ մեր օրերը: Պատմութեան մէջ չկայ կայսրութիւն կամ գերտէրութիւն (ինչ ալ բառ գտած են քաղաքական ու դիւանագիտական ախոռներուն մէջ կապուած սուտ պատմաբանները) որ իր արժանի պատիժը ստացած չըլլայ:

Ձէ եղած, չկայ ու պիտի չըլլայ...

Նոյն այս էջերէն, յօդուածի նախորդ երեք մասերուն մէջ ձեզի ներկայացուցան "Ան թանթ"-ի (Անգլիա, Ռուսիա, Ֆրանսա) եւ Քառ եակ "Դաշինք"-ի (Գերմանիա, Աւստրո-Հունգարիա, Թուրքիա, Իտալիա՝ որուն աւելի ուշ փոխարինեց Պուլկարիան) պետութիւններուն ակնկալութիւնները, երբ անոնք կը հրահրէին Առաջին Աշխարհամարտը:

Անմիջապէս ըսենք, որ անոնցմէ որեւէ մէկը այդպէս ալ իր ուզածին չհասաւ: Աւելին՝ որպէս կազմակերպուած եւ խմբակային ծանրագոյն յանցագործութիւններու մեղսակից, անոնցմէ ոմանք պատմութեան անկաշառ դատաստանին կողմէ մասնակիօրէն պատժուեցան: Այդ պատիժէն պիտի չկարենան խուսափիլ նաեւ միւսները: Ասիկա ոչ ցանկութիւն, ոչ ալ կանխատեսում է: Ասիկա պատմական օրինաչափութիւն է, որ ի զօրու չեն խախտել նոյնիսկ իրենք-գիրենք գերտէրութիւն յորջորջող եւ օր ու գիշեր ժողովրդավարութեան մասին բարբաջող կարգ մը երկիրներ: Անոնք պարզապէս լաւ չէին գիտեր պատմութիւնը՝ առաջին մարդասպան կայէնէն մինչեւ մեր օրերը, ապա թէ ոչ շատ լաւ պիտի գիտակցէին, թէ ուր են հիմա եւ այսօր պատմութեան ո՛ր փոշոտ

դարակներուն մէջ կը հանգչին ժամանակներու իրապէս գերհզօր կայսրութիւնները:

ԱՄՆ-ի նախագահ Պուշ-կրտսերը, օրինակ, իր "խաղաղասիրական" բարձրունքէն չէր յոգնէր քննադատել Ռուսիոյ իր գործընկեր Փութինը՝ անջատողական չէզնչներու դէմ դաժան պատժամիջոցներ կիրարկելու համար, սակայն, երբ լրագրողները իրմէ խնդրեցին գոնէ քարտէսի վրայ մատնացոյց ընել Չեչնիան, Պուշ-կրտսերը պահ մը շփոթած նայեցաւ դահլիճին, ապա ամբարտաւանօրէն պատասխանեց, թէ ատոր համար ինք... խորհրդակցանք ունի:

Ուրիշ անգամ մը, հայ-ատրպէյճանական հակամարտութեան արշալոյսին, ԽՍՀՄ առաջին ու վերջին նախագահ Կորպաչովի պատմաբան-օգնականը բառացիօրէն ըսաւ.- "Ինչո՞ւ հայերն ու ատրպէյճանցիները իրարու միայնով միտին չեն պատժեր դարբաղցիները, որ սեպի պէս խրած են դրացի ու եղբայր ժողովուրդներու միջեւ":

Կարծես այս դէպքերուն համար ըսած է մեծ երգիծաբանը. "Կարելի էր կուշտ մը խնդալ, եթէ ամէն բան այսքան ողբերգական չըլլար":

Ահա ա՛յս չափով տեղեակ են պատմական անցուդարձերուն իրենք գիրենք աշխարհի փրկիչ կարծող շատ ու շատ «մեծամեծներ» եւ ԱՄՆ-ի նախագահն ու ռուս վայրպատմաբանը իրենց "հանճարեղ" փայլատակումներուն մէջ եզակի չեն:

Գանք, սակայն, Առաջին Աշխարհամարտին: Մինչեւ այս յօդուածի յաջորդ հատուածներուն մէջ նաւթի ու ոսկիի փայլէն կուրցած պետութիւններուն զատ-զատ անդրադառնալը՝ փորձենք ընդհանուր գիծերու մէջ հասկնալ թէ ի՞նչ կ'ակնկալէին եւ արդիւնքին մէջ ի՞նչ շահեցան շուրջ երկու միլիոն հայերու անմեղ արիւնը եւ անոնց բարգաւաճ, շէն Հայրենիքը անհայրենիք բարբարոսի յօշոտումին յանձնած, քրիստոնէական բարեպաշտութեան դիմակի տակ քողարկուած համաշխարհային շահաձուկերը:

Պերլին-Պաղտատ երկաթուղին, որու կառուցումով գերմացիները

փորձեցին իրենց վերահսկման ենթարկել ամբողջ Մերձաւոր Արեւելքը՝ այդպէս ալ չկառուցուեցաւ. աւելին՝ Գերմանական կայսրութիւնը փլուզուեցաւ, իր փլատակներուն տակ առնելով գիրենք՝ գերմանացիները:

Անգլիան եւ Ֆրանսան, որոնք դարերով ձրիակերութեան վարժուած էին, անդադար պարարտանալով իրենց անծայրածիր գաղութներու ստրկացման հաշուոյն՝ գրկուեցան իրենց կերակրատաշտերէն եւ բարոյական ու տնտեսական խորունկ ճգնաժամի մէջ յայտնուեցան: Որպէս իրենց երեսպաշտ քաղաքականութեան պարգեւ կամ վճար, անոնք երկու տասնամեակ անց Երկրորդ Համաշխարհային պատերազմը ստացան:

Փլուզուեցաւ ու մասնատուեցաւ նաեւ Աւստրո-Հունգարիան եւ այդ երկիրները վերածուեցան այլ տէրութիւններու քաղաքական կցորդներուն, բան մը, որ առ այսօր կը շարունակուի:

Կործանեցաւ նաեւ ռուսական անծայրածիր ու անպարտելի կարծուած կայսրութիւնը, եւ քաղաքացիական եղբայրասպան պատերազմներն ու անհանդուրժողականութիւնը տասնամեակներով շարունակեցին ցնցել պետութեան հիմքերը՝ երկու տասնեակ միլիոնէ աւելի մարդկային կեանքեր խլելով:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու սեւ ու ստուերային դերակատարումը հայոց ողբերգութեան մէջ, թերեւս ամէնէն փոքրն էր վերոնշեալ երկիրներու բաղադրամասը, որ սակայն բարեսրտութեան կամ քրիստոնէական գթասրտութեան արդիւնք չէր բնաւ... Պարզապէս, ի հակադրութիւն եւրոպացի գործընկերոջ, անոնք այդ սրիկայութեան մեծ խրախմանքին "արժանիօրէն" մասնակցելու համար այնքան ալ թրծուած չէին, բան մը սակայն, որ անոնք "յաջողութեամբ" եւ "մեծ վարպետութեամբ" կրցան շտկել քսան-քսանհինգ տարի ետք:

Երկրորդ Աշխարհամարտի ընթացքին: Թուրքերուն եւ անոնց պզտիկ "արբանեակներ"-ուն՝ քիւրտներուն եւ չէչններուն հարցը ուրիշ նիւթ է, որուն մենք այս յօդուածին վերջին՝ Զ. հատուածով կ'անդրադառնանք:

(Շարունակելի)

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ԳԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝

Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125

Վերջին Լուրերու Համար



Հայ news.am

ԼԱՐՔ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԶԱՍԵՐԳՆԵՐՈՒ ԽՈՅԱՆՔԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Շարունակում է 8-էն

Լարք Երաժշտանոցի նորաւարտ տաղանդաւոր դաշնակահար՝ Ալլէն Տիշիկրիքեան, որ հանդէս եկաւ Հայագրի աշխարհով մէկ ճանչցուած մեծատաղանդ երգահան Արամ Խաչատուրեանի գլուխգործոց ստեղծագործութիւններէն, Piano Concerto in D-flat Major-Allegro - ուով: Ալլէն Տիշիկրիքեանի վարժ մատները կը թռչկոտէին իր դաշնակի ստեղներու վրայ սահուն, անխոնջ եւ գոց: Ան կը թափահարէր իւրապատուկ այնպիսի մեկնաբանութեամբ, որ կարծես, կ'ուզէր այժմէն աւետել բոլորին, ծնունդ առնող նոր Խաչատուրեանը: Որոտընդոստ ծափահարութիւնները այդ կ'ապագուցանէին:

Կ'աղարին յաջորդող յայտագրի բովանդակութիւնը իր լրումին կը հասցնէր օրուայ համոյթին գեղարուեստական բարձրորակ կատարողութիւնը: Հերթը W.A.Mozart-ին էր, որուն գլուխ գործոցներէն էր Great Mass in Minor հոգեւոր գործը, որուն բաղադրամասերը կը կազմէին.

1- KYRIE: Kyrie Eleison (Andante moderato) մասնակցութեամբ երգչախումբի եւ soprano-ի,

2. GIORIA-ն՝ հետեւեալ ենթաբաժանումներով. Gloria in excelsis Deo (Allegro vivace-Chorus), Landamus te (Allegro aperto - Soprano II), Gratias agimus tibi (Adagio-Chorus), Domine Deus (Allegro moderato- Sopranos I and II), Quoniam tu solus (Allegro moderato - Soprano I and II, Tenor), Jesu

Christe (Adagio- Chorus) եւ Cum Sanctu (Chorus):

3- CREDO: Credo in unum Deum (Allegro maestoso :- Chorus) եւ Et incarnatus est (Andante: Soprano 1)

4- SANCTUS: Sanctus (Double choir) եւ Benedictus qui venit (Allegro comodo-Q. & D-c)

Յայտնենք, որ W.A.Mozart-ի Great Mass in Minor հոգեւոր գործի մենակատարներն էին Շուշիկ Պարսումեան (Soprano), Կարինէ Աւագեան (Mezzo Soprano), Բաֆֆի Քրպապեան (Tenor) եւ Արա Քուրուեան (Bass), որոնք լաւագոյնս մեկնաբանեցին դեռեւս իր աւարտին չի յանգած լայն մասշտապի հոգեւոր այս գործը, որ իր մէջ կը խտացնէր 26-էն 27 տարու Mozart-ի անվիճելի հանճարը:

Աւելի քան երկու ժամ տեւած ներկայ համոյթի վերտառութիւն՝ «Վեմ Ներշնչանք»ը, ունեցաւ իր բացարձակ արդարացումը, որուն գլխաւոր ճարտարապետը հանդիսացաւ մեր բազմատաղանդ խմբավար Վաչէ Պարսումեանը, որուն մատներուն արանքին ամբողջութեամբ երաժշտական նրբին ճակատով կատարած հեղաձկուն ցուցմունքներուն եւ առաջնորդութեան ներքեւ՝ նուազախումբ, երգչախումբ, մենակատար երգիչ-երգչուհիները դաշնակահար՝ մատուցեցին երաժշտական աննախընթաց համոյթ մը, որուն համար արժէ ամէն գնահատանք ու շնորհաւորութիւն:

Վարձքը կատար եւ ամենայն բարիք սիրելի Maestro՝ Վաչէ Պարսումեան:

ԵՐԱԺՇՏ ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Շարունակում է 8-էն

րէն, ան պատասխանեց. «Հայ երգը նախ լեզուով է տարբեր, յետոյ՝ ան ծնած է հայ հողէն. ան քար է, աշխատանք է ու ամենակարեւորը՝ հայու իննալոյ նկարագրի արտացոլացումն է, դրսեւորուած՝ ձայներու գաղութեան եւ պարզութեան ձեւով»:

Վերջաւորութեան աշակերտները առիթը ունեցան հարցումներ հարցնելու եւ աւելի խորապէս ծանօթանալու հայ ժողովրդական երգին ու Հայաստանի մերօրեայ երաժշտական հակումներուն: Աշա-

կերտուհիներէն Թայլին Նազարեանը իր դասընկերներուն անունով Պարոն Մանսուրեանին յանձնեց բոլորին կողմէ ստորագրուած շնորհակալական բացիկ մը, ուր պատանիները անոր կը մաղթէին երկար ու բեղուն տարիներ:

Յիշեցնենք, թէ Տիգրան Մանսուրեանի հետ եղած մտերմիկ նիստեր՝ 10րդ դասարանի աշակերտներուն համար սկսած դառնալ աւանդական. անցեալ երեք տարիներուն ան դասախօսութիւններ տուած էր Չարենցի, Տէրեանի եւ Քուշակի մասին:

ՂՐԻՍ ԹԵՐԱԿՂԶԻՆ ԵՒ ԶԱՅԵՐԸ

Շարունակում է 13-էն

եակին առթիւ, Ռուսաստանի Գերագոյն Սովետի նախագահութեան կողմէ Նիգիթա Խրուշչովի ստորագրութիւնը կրող հրամանագրով մը, վերակազմաւորուեցաւ Ղրիմի մարզը եւ միացաւ Ուքրանիոյ, որպէս ինքնավար հանրապետութիւն:

Ղրիմի մէջ զարգացած է անասնապահութիւնը, յատկապէս ոչխարաբուծութիւնը, այգեմշակութիւնն ու ծաղկամշակութիւնը, ինչպէս նաեւ նաւաշինութիւնը: Ընդերքը հարուստ է երկաթի եւ մարմարի հանքերով: Նշանաւոր են իր ծովափնեայ հանգստեան վայրերն ու ամառանոցները:

Ռազմագիտական տեսակէտով Ղրիմը մեծ կարեւորութիւն ունի Ռուսաստանի Դաշնութեան համար: Այստեղ կը գտնուի ռուսական ծովուծի եւ օդուծի Սեւ Ծովեան խարիսխտներն ու զօրանոցները:

2001 թուականի մարդահամարին համաձայն Ղրիմի բնակչութեան 59 առ հարիւրը ռուսեր են, իսկ 12 առ հարիւրը թաթարներ: Կան նաեւ կարեւոր թիւով այլ փոքրամասնութիւններ:

Հայերը Ղրիմ հաստատուելու սկսած են Տիգրան Բ. Մեծի օրէն սկսեալ: Հայերու թիւը երթալով ստուարանալու սկսած է 16-17րդ դարերուն: Այդ շրջանին Միայն Գաֆա քաղաքին մէջ կ'ապրէին 50 հազար հայեր:

Ղրիմահայերը առեւտրական կապեր հաստատած էին Եւրոպայի եւ Ասիոյ բազմաթիւ երկիրներու հետ (Վենետիկ, Ճենովա, Ռուսաստան, Պուրկարիա, Ռումանիա, Լեհաստան, Թուրքիա, Պարսկաստան, եւ այլն):

Ղրիմի մէջ յառաջացած էր հայ խոշոր հողատէրերու բաւական բազմանդամ խաւ մը (Ստեփանեաններ, Օպերովներ, Սպենդիարովներ, Թոփալովներ, Պենկլիեներ եւ այլն): Որոշ ունեւոր հայեր

իրենց դրամագլուխը որպէս ներդրում օգտագործած էին գործարանային արտադրութեան մէջ: Ունէին կաշեմշակման, կղմինտրի, աղիւսի, օճառի, մոմի, սնունդի եւ այլ ձեռնարկութիւններ:

Հայերը գործնական մասնակցութիւն ունեցան Ղրիմի բարեկարգումին ու զարգացումին: Յովհաննէս Այվազովսկիի նիւթական օգնութեամբ եւ նախաձեռնութեամբ 1888-ին Թէոդոսիա քաղաքն ապահովուեց ըմպելի ջուրով: Ն. Շահավերդեանի նախագիծով 1901ին առաջին անգամ ըլլալով օժտուեցաւ արտաքին ելէկտրական լոյսեւրով:

Ղրիմահայ գաղութը ապրած է նաեւ ազգային, մշակութային, կրթական եւ եկեղեցական ծաղկուն գործունէութիւն: Նշանակալից չափով իրենց նպաստը բերած են Գաֆայի, Սուրխաթի, Ղարասուբազարի եւ Ս. Խաչ վանքի մէջ գործող հայկական դպրոցները: Հայերը շատ յառաջացած էին գիտութեան եւ բժշկութեան մէջ եւս: Իսկ ճարտարապետութեան մէջ աչքի զարկած են հայկական ոճով կառուցուած նշանաւոր յուշարձաններն ու եկեղեցիները: 19րդ եւ 20րդ դարերուն հայկական բոլոր համայնքներուն մէջ կը գործէին դպրոցներն ու եկեղեցիները: Մեծ զարկ տրուած էր նաեւ հրատարակչական գործունէութեան (գիրքեր, ամսագրեր, հանդէսներ, թատերագիրքեր, պարբերականներ): Թէոդոսիայի մէջ հրատարակուած են «Մասեաց Աղաւնի» եւ «Դաստիրակ» պարբերականները:

19րդ եւ 20րդ դարերուն Ղրիմահայերու նշանաւոր արուեստագէտներն էին Յովհաննէս Այվազովսկին եւ իր աշակերտ Մ. Մահտեսեանը, կոմպոզիտորներ Ա. Սպենդիարեանը, Փ. Կարա Մուրզան, Ա. Բաղդասեանը, Չութակահար եւ մանկավարժ՝ Յ. Նալպանդեանը եւ ուրիշներ: ԲԱՂԵՑ՝ Գ. Մ.

ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ ՍԸՔԲԷՅՆ ԿԸ ՎԻՐԱԴՈՒԵ

Շարունակում է 13-էն

մին:

Սուրիահայութեան շտապ օգնութեան եւ վերականգնման մարմնի (ՄՇՕՎՄ) կայքը՝ www.syriashdab.com , կը տեղեկացնէ, որ 2013 թուականի Սեպտեմբեր 30ի դրութեամբ, պատերազմը լուրջ վնաս հասցուցած է հայկական համայնքին. գործողութիւններու ընթացքին սպաննուած է 64, եւ վիրաւորուած է 172 իսրայէլ բնակիչ, առեւանգուած է 110 մարդ եւ զոհուած 15 զինուոր: Բացի ասկէ, վնասուած են հայկական տարբեր կառույցներ. եօթը առաքելական եւ երեք կաթողիկէ եկեղեցի, տասներեք դպրոց եւ տասը համայնքային կեդրոն: Սուրիահայ 65 հազար հաշուող համայնքին գրեթէ կէսը փախած է Հայաստան, Լիբանան եւ այլուր:

Սուրիոյ հայկական ինը գլխաւոր ընկերային, կրօնական եւ քաղաքական կազմակերպութիւններէն կազմուած ՄՇՕՎՄ-ը կը հաղորդէ,

որ մինչեւ նախորդ տարուան Սեպտեմբերի վերջը ստացած է 1.7 միլիոն տոլար՝ արտասահմանեան հայկական կառույցներէն: Թէեւ ափսոսալի փոքր մաս մըն է անհրաժեշտ գումարին, սակայն ՄՇՕՎՄ-ը կրցած է ատով անուղե, ապաստան, անվտանգութիւն, բժշկական եւ կրթական աջակցութիւն ապահովել սուրիահայերուն, ներառեալ՝ 500 հազար տոլար ուսման թոշակ՝ 38 դպրոցներ յանձնարող 6436 աշակերտներու համար:

Լաւ կ'ըլլայ, որ ծերակուտական Մըքթէյն եւ Միացեալ Նահանգներու այլ ժպիրս պաշտօնեաներ անսան Միացեալ Նահանգներ ժամանած Սուրիոյ քրիստոնեայ առաջնորդներուն իմաստուն խորհուրդին: Աւելի մեծ քանակութեամբ գէնքի առաքումը Սուրիա միայն կը սրէ պայքարը՝ յանգեցնելով անվերջ արիւնահեղութեան:

Թարգմանեց՝ ՌՈՒԶԱՆՆԱ ԱՒԱԳԵԱՆ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 100,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:----- Fax:-----

SEROP'S CAFE

GREEK & LEBANESE FOOD

SERVING BATON ROUGE SINCE 1979

ԱՐՏԱԳԱՂԹԻ ԱՐՅԱԽԻՐՔ

Շարունակում է 7-էն

մեկնած է 1 միլիոն 888 հազար 165 մարդ, իսկ երկիր վերադարձողներուն թիվը եղած է 1,780,160 մարդ: Այլ խօսքով 108,005 մարդ չէ վերադարձած հայրենիք:

Իշխանութիւններու տեսակէտը այն է որ արտագաղթը համաշխարհային խնդիր է: Ճիշտ է որ մարդիկ միշտ ալ ցանկութիւն ունին տեղաշարժուելու, բայց ի՞նչ են անոր հետեւանքները մեր հայրենիքին համար. Ա՛յդ է մեր մտահոգութեան կորիզը:

Բոլոր անոնք, որոնք Հայաստանէն կը մեկնին Ռուսաստան, ընդհանրապէս վերադառնալու ցանկութեամբ կը մեկնին, սակայն բոլոր անոնք, որոնք Եւրոպաներ կը մեկնին, անկասկած որ մշտական բնակութիւն հաստատելու երազանքով կ'երթան:

Երեւանի մէջ լոյս տեսնող «Հայկական ժամանակ» թերթը կը գրէ, որ ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայութեան հրապարակած թիւերը սարսափեցուցիչ են. մարգերու բնակչութիւնը նուազած է 13-17 տոկոսով:

Հայաստանի Վիճակագրական Ծառայութեան հրապարակած տուեալներու համաձայն 2013 թուականի Յունուարէն մինչեւ Սեպտեմբեր ամիսներու ընթացքին 122,191 Հայաստանի քաղաքացիներ անցած են սահմանային կէտերը եւ չեն վերադարձած: Նախորդ տարի չվերադարձողներուն թիւը եղած է 109,405: Այս թիւերը անհանգստութիւն յառաջացուցած են հասարակութեան բոլոր խաւերուն մէջ:

Հոկտեմբեր 19, 2013-ին էջմիածնի մէջ գումարուած «Եկեղեցի եւ պետութիւն. փոխարարներութիւններ, հրամայականներ եւ մարտահրաւերներ» խորագրով միջազգային գիտաժողովը ուրիշ բան չէր եթէ ոչ կրկնակի հիասթափութիւն մը: Մամուլը հաղորդագրութեան մէջ չենք տեսներ որեւէ ակնարկութիւն արտագաղթի մասին: Ըստ երեւոյթին, մեր Եկեղեցին մտահոգ չէ, որ օր մը մեր եկեղեցւոյ նստարանները թափուր պիտի մնան, եթէ չեն արդէն իսկ:

Արտագաղթ միշտ ալ տեղի ունեցած է թէ՛ համայնապար տիրապետութեան տարիներուն, եւ թէ՛ Երրորդ Հանրապետութեան՝ անկախութեան տարիներուն: Նկատի

ունենալով որ տարիներ զբաղած են Ամերիկայի Միացեալ Նահանգներու գաղթականական հարցերով, արդարօրէն եւ անվերապահ կերպով կ'ուզեմ բացայայտել ճշմարտութիւնները, մասնաւորաբար հայրենիքէն արտագաղթողներու մասին:

1960-ական թուականներուն արտագաղթ մը սկսած էր դէպի Միացեալ Նահանգներ, մասնաւորաբար ԱՆՉԱ-ի հովանաւորութեամբ, Սովետական պետութեան արբանեակ Պալքանեան երկիրներէն՝ Ռումանիայէն եւ Պուլկարիայէն: Այս արտագաղթին անմիջապէս յաջորդեց՝ արտագաղթը Հայաստանէն:

1970-ական թուականներուն, Միացեալ Նահանգներու Լաութերն-պրոյկ Բարեփոխում (Senator Frank Lautenberg Amendment) կոչուած օրէնքի թոյլտուութենէն օգտուելով (իրականութեան մէջ այդ օրէնքը պատրաստուած էր սովետաբնակ հրեաներու համար, որոնք որպէս թէ կը «հալածուէին» իրենց երկրին մէջ) մեր հայ եղբայրներն ու քոյրերը թողուցին հայրենիքը եւ կարաւանները շարան առ շարան հասան մասնաւորաբար Միացեալ Նահանգներ, կազմելով նորանոր գաղութներ անոր Արեւելեան ափերէն մինչեւ Արեւմտեան ափերը:

Արտագաղթողներուն մեծամասնութիւնը 1946-47 տարիներուն ներգաղթողներն էին եւ կամ անոնց գաւակները, որոնք արեան գնով իրենց բաժինը բերած էին հայրենիքի կերտումին: Տակաւ առ տակաւ այս խումբին միացան նաեւ ինամիական կապ ունեցող բնիկ Հայաստանցիներ: Չարմանային ա՛յն է, որ այդ տարիներուն ո՛չ Հայրենիքէն ներս եւ ո՛չ ալ Սփիւռքի տարածքին ահագանգ հնչեցնողներ կային. կարծես արտագաղթը բնական երեւոյթ էր:

Յաջորդաբար՝ ականատես եղանք ա՛յլ արտագաղթերու. Լիբանանէն (քաղաքացիական պատերազմ), Եգիպտոսէն, Պարսկաստանէն (իսլամական յեղափոխութիւն), Յորդանանէն, Իրաքէն եւ Սուրիայէն: Այս երկիրներէն գաղթող հասարակութեան մասին լրջօրէն մտածող չեղաւ երբեք՝ ո՛չ Սովետական ուսպա՝ նորանկախ Հայաստանի իշխանութիւնները, եւ ո՛չ ալ արտասահմանի մեր կազմակերպութիւնները: Արտագաղթողները ձգուեցան իրենց անորոք ճակատագրին: Նոյն ճակատագրին արժանացան նաեւ Պաքուի եւ Սոււմգայիթի դէպքերուն պատ-

ճառով Ատրպէյճանէն վտարուած մեր փախստական եղբայրներն ու քոյրերը:

Մեր մտահոգութեան կեդրոնական բաժինը պէտք է ըլլայ՝ գիտական, կրթական եւ մշակութային մեր ներոյժի արտահոսքը՝ դէպի հիւրընկալ երկիրներ: Երիտասարդ ուժերու հեռացումով, կը ստեղծենք ծանր պայմաններ մեր ազգային գոյութեան եւ անվտանգութեան ծիրէն ներս: Մեր դարաւոր թշնամիները գիտակցելով այս իրողութեան, ամենայն լուծեամբ կ'ըստանան հայթափումի այս ահաւոր եղեւնագործութեան:

Ճիշդ է, որ Հայաստանէն արտագաղթի հիմնական պատճառները բազում են եւ այլապէս՝ անգործութիւն, քաղաքական անկայունութիւն, ընկերային անարդարութիւն, խտրականութիւն, նպաստաւոր բնակարաններու չգոյութիւն, եւ կարելի է շարքը երկարել՝ բայց այս բոլորէն վեր եւ անդին ժողովուրդը կորսնցուցած է իր հաւատքը իր Մայր Եկեղեցւոյ արդարամտութեան նկատմամբ, որ այսօր չի՝ դատապարտեր կատարուած անիրաւութիւններն ու անարդարութիւնները: Կորսնցուցած է նաեւ իր հաւատքը՝ հանդէպ իր ապագայի բոլոր երազներու իրականացման օրրանին՝ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ:

Չգալի կերպով ծանծաղ դարձած է մեր ազգային մտածողութիւնը, որովհետեւ՝ նախապատուութիւն տուած ենք միշտ մեր անհատական շահերուն, թէ՛ մեր եկեղեցական, եւ թէ՛ քաղաքական կեանքին մէջ: Դժբախտաբար մեզի կը պակսին առաջնահերթութիւն ունեցող երկարաժամկէտ ծրագիրներ, հակառակ ա՛յն իրողութեան՝ որ ունինք այդ բոլորը իրականացնող քաղաքական, գիտական եւ կրթական մարդոց: Մեզի կը պակսին՝ հաւաքական կամքը եւ տեսիլքը:

Հետեւաբար ի՞նչն է, որ մեզ կրնայ փրկել այս ազգային գահավիժումէն.՝

- 1.- Արդարութիւն. վարձատրել բոլորը հաւասարապէս իրենց արժանիքներու համաձայն:
- 2.- Կրթութիւն. կարելի չափով ճրի եւ որակաւոր դարձնել բոլոր վարժարանները:
- 3.- Առողջութիւն. Չմերժել բոլոր անոնք, որոնք կարիքը ունին բժշկութեան եւ չեն կրնար ապահովագրութիւն գնել:
- 4.- Օրինականութիւն. Ո՛չ մէկ քաղաքացի կրնայ նկատուիլ օրէնքէ վեր: Օրինականութեան բացակայութիւնը կը տանի մեզ անիշխանա-

կանութեան:

5.- Ապահովութիւն. Քաղաքացին պէտք է իմանայ թէ որպէս երկիրն հարազատ գաւակը՝ ապահով է իր կեանքը եւ ո՛չ ոք կրնայ խլել այդ իրաւունքը իրմէ:

6.- Սեփականութիւն. Աշխուժացնել գործօններ, որպէսզի իւրաքանչիւր քաղաքացի իր արժանավայել բնակարանը ունենայ:

7.- Գիւղատնտեսութիւն. Չարգացնել եւ երաշխաւորել գիւղացիի հարազատ քրտնաթոր աշխատանքը:

Եւ այս բոլորէն վեր եւ անդին՝ ՍէՐ ունենալ իրարու հանդէպ, ըլլալ ողորմած եւ զթափրտ: Ասիկա պետութեան ընկերային պարտաւորութիւնը ըլլալէն զատ՝ խորապէս է՝ նաեւ Եկեղեցւոյ կոչումէն բխող՝ կրօնաբարոյական, մարդասիրական ծառայութեան պարտաւորութիւն մը: Այնուհետեւ կարելի պիտի ըլլայ դիմագրաւել մեր դարաշրջանի բոլոր մարտահարաւէրները, ինչ ալ ըլլան մեր դրացի երկիրներու ներգաղթի քաղաքականութիւնները, հայրենիքի չըջափակումը եւ այլ քաղաքական եւ ընկերային ազդակներ:

Ժամը հասած է եւ պէտք է ցոյց տալ հաւաքական ներդաշնակ աշխատանք, կամք եւ համոզուած վճռակամութիւն հայրենիքը փրկելու համար: Երկրի պետական այրերուն եւ անոնց շուրջ թաւալող արբանեակային շրջանակներուն՝ մեղմ ասած՝ անկուշտ ընչաքաղցութիւնն ու անտարբերութիւնը արտագաղթի օրէ օր խորացող վտանգին հանդէպ դատապարտելի է ըստ ամենայնի: Նոյնքան դատապարտելի է նաեւ գործուող ահաւոր չարիքին հանդէպ ցուցաբերուած համակերպող լուծութիւնը մասնաւորաբար մեր նուիրապետական Աթոռներու գահակալներուն կողմէ, որոնց վատահուած է հայ ժողովուրդի հոգեւոր առաջնորդութիւնը: Չենք ուզեր սխալ հասկնուիլ. ամէն արժանի չարգանք՝ մեր Նուիրապետական Աթոռներուն եւ բարձրաստիճան հոգեւորականներուն, բայց եւ այնպէս խոնարհաբար կ'ուզենք նշել, թէ անոնց բարոյական պարտքն է, հարկ եղած ժամանակ, մեր Եկեղեցւոյ՝ մահուան վտանգը արհամարհած առաջին հայրապետներու օրինակով, քաջաբար մատնանշել պետական իշխանութեանց սխալները եւ յորդորել, ի հարկին նաեւ պահանջել, որ անոնք զգաստանան եւ ուղղեն իրենց ընթացքը՝ յանուն երկրին եւ ժողովուրդին վերին, յաւիտենական շահերուն:

INNOVATIVE
 Designs  Manufacturing, Inc.

idmifurnishings.com